

ԾԱՂԻԿ ԿԸ ՀՐԱՄԱՐԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՕՐԻՐԸ. — Հա-
մար 40 փարա:

Բաժանորդագրին ԿԱՆԻՍԻԿ — Պոլսոյ Համար տարե-
կան 45 դր. վեցամսեայ 23 դր. եռամսեայ 12 դր. —
Գաւառացի Համար տարեկան 50 դր. վեցամսեայ 26
դր. եռամսեայ 14 դր.:

Ռուսիոյ Համար տարեկան հինգ ռուբլի: Ուրիշ եր-
կիրներու Համար 12 ֆրանք:

Գաւառներէն դրոշմաւճագի՞ կ'ընդունուի:
Միայն երեք թիւ ապագի կ'ընդունի: այնուհետեւ
բաժանորդագրին չը վճարողը կը դադարի թերթը ընդու-
նելէ:

Երանցման տողը 2 դր.:

40 փարա

ԾԱՂԻԿ

Հ Ր Ա Պ Ի Ր

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ԾԱՂԻԿ Ի Վերաբերեալ ամէն գործի Համար դիմել
Առ Տնօրէն-Հրատարակիչ ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ
Պոլսոյ, Էսկի-Չաբիէ, Պէրպէրեան Տպարան

درعليه ده اسكي ضبطيه زقاغده بربريان مطبعه سنده
« زايك » غزتهسى مديرى بالا قاشيان حوونان

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien « Dzaghik »,
Rue Esski-Zabtié, Imprimerie N. Bérbérian
CONSTANTINOPLE

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Ա. ՏԱՐԻ. ԹԻՒ 36

Շ Ա Բ Ա Թ

18 ՄԱՅԻՍ 1891

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Եգիպտոս. — Բորբուկալ. — Քիլի. — Անգ-
լիոյ Խորհրդարանը. — Ֆրանսա. — Վեհապե-
տական այցելութիւնք:

Անցեալ շաբթու Եգիպտոսի նախարարա-
պետը՝ Րիազ փաշա հրաժարեցաւ իւր պաշ-
տօնէն: Այս հրաժարական թէւ Անգլիացի-
ւոց հակառակ ոգի մը տածելուն վերագրուե-
ցաւ, այլ աւելի հաւանական կ'երևի որ Պ.
Սքոթի դատական գործոյ մէջ վերջերս մու-
ծած բարենորոգումներ եղած լինին իւր շար-
ժառիթ այն հրաժարման: Նոր նախարարու-
թիւնը կազմուեցաւ բանխորհուրդի և խոհական
անձերէ: Մուսթաֆա Ֆէհմի փաշայի նախա-
րարապետութեամբ:

Բորթուկալի նորընտիր նախարարութիւնը
յառաջդիմական և պահպանողական կուսակ-
ցութեան կը պատկանի. լրագրիք ջերմ ըն-
դունելութիւն մ'ըրած են իրեն: Ամէն կող-
մէ յայտ կը յայտնուի թէ Բորթուկալի վիճակն
ի մասոյ պիտի բարելաւուի: Արդէն նոր նախա-
րարք փութոյ պնդութեամբ գործի ձեռնար-
կած են: Ելմտական նախարար Պ. Մարիանո
մայիս 23ին Լիսապոլայէն մեկնեցաւ Փարիզ
երթալու համար, ուր ի կատար պիտի հանէ
իւր նախորդին օրով սկսուած բանակցու-
թիւնները:

Ի Քիլի կը շարունակուին յուզմունք. Ե-
րից տէրութեանց միջնորդութիւնն ելք մը
չունեցաւ: Երկու կուսակցութիւնք նոր ձա-
կատամարտեր մղելով միմեանց դէմ, վնաս-
ները կը բազմապատկեն: Կառավարութեան
հակառակ տարրը թալթալի մաքսատուները գը-
րաւած էր. անցեալ շաբթի օր Քիլեան մար-
տանաւ 200 զօրքով յարձակմամբ ետ առին
զայն, սակայն 24 ժամ յետոյ հակառակորդք
իրենց զօրութիւնները համախմբելով՝ վերըս-
տին արտաքսեցին մարտանուէրն ու զօրքերը:

Վիթթորիա թագուհին ի Տերպի կառու-
ցանելի հիւանդանոցին հիմնարկութիւնը կա-
տարելէ յետոյ՝ Սկովիտոյ մէջ իւր ունեցած
Պալմորալի դղեակը գնաց:

Յուսալի է որ Անգլիոյ Խորհրդարանը՝ Հո-
գեգալուտարի արձակուրդէն առաջ՝ զրազի Իր-
լանտայի հողային բարենորոգման խնդրով,
և արձակուրդէն անմիջապէս յետոյ քուէար-
կէ Իրլանտայի հողագործներն իրենց մշակած
հողերուն տէր ընող այդ բարենորոգմանց ծը-
րագիրն որ է ընդարձակումն Կլատթոնեան
օրինաց: Ապա պիտի գրադի թէր-Նէօփի
ձկնորսութեան խնդրով և նախնական
ճրի կրթութեան վիճարանութեամբ: Ժողո-
վոյն արձակուած միջոցին ի Մանիբուրի տեղի
ունեցած դէպքերուն համար Կապուտ Տեա-
րակ մը բաշխուեր է, որոյ մասին անշուշտ
վիճարանութիւններ տեղի պիտի ունենան՝
նոյնպէս արձակուրդէն յետոյ:

Ֆրանսական Հանրապետութեան նախա-

գահը՝ Պ. Քառնո կը շարունակէ իւր պառոյտն
ի հարաւային Ֆրանսա: Բո գտնուող Անգ-
լիացիք ջերմ ընդունելութիւն մ'ըրին, և
Սպանիոյ թագուհւոյն կողմէ զրկուած զին-
ուորական պատուիրակութիւնն իրեն ներ-
կայանալով՝ բարի գալուստ մաղթեց: Մա-
յիս 26ին Բարիզ գործաւ:

Ֆրանսայի Երեսփ. Ժողովը երկար վիճա-
րանութիւններէ յետոյ վերջապէս ցորենի և
ալիւրի մաքսատուքը զեղչած է:

Նոր խնդիր մը սկսած է յուզել մոքերն
ի Ֆրանսա: Մեկնիդ կոչուած նորագլուտ
վառօղի մը հնարիչը՝ Թիւրքէն՝ որ պատե-
րազմական նախարարութեան հետ կը բանակ-
ցէր իւր գլխու վաճառելու համար, ձերբա-
կալեցաւ՝ այդ վառօղին գողտնիքը Պ. Ար-
մըթբընկ անգլիացւոյն յայտնած լինելու
ամբաստանութեամբ: Պ. Թիւրքէն իւր կար-
գին Թրիքիէ անուն անձ մը կ'ամբաստանէ
իր պատճառ այդ գողտնեաց յայտնուելուն:
Սակայն պատեհաբանական նախարարը՝ Պ. Յը-
րէնիէ կը յայտնէ թէ մեծ վատնք չկայ,
ծախուած գողտնիքն ու յատակագծերն՝ սը-
լալ, և շինութեան եղանակը Ֆրանսայի
ձեռքը լինելով:

Ռուսիոյ Չարը՝ Չարուհւոյն հետ, մայիս
25ին Բեթերսպուրկէն մեկնեցաւ Մոսկուա
երթալու համար ուր Ազգ. քսանդր Բ. Կայսեր
յիշատակարանը և Կեդրոնական Ասիոյ բեր-
քերու ցուցահանդէսը բանալէ յետոյ՝ Բե-
թերսպուրկ պիտի գաւնայ: Իսկ Կայսրուհին
Լիվադիա պիտի երթայ Եորկէյ Մեծ Դուքը
գլխավորելու համար: Կայսրն ալ յետոյ պիտի
միանայ Կայսրուհւոյն ի Լիվադիա:

Վիլհելմ Բ. Կայսրը յուլիս 10ին Անգլիա
պիտի երթայ Հոլանտայի ճանապարհաւ, ուր
մի քանի օր Խնամակալ Թագուհւոյն հիւր
պիտի լինի: Օգոստոս 15ին ալ Հելսինկյան
պիտի երթայ՝ այդ կողմոյն Գերմանիոյ փո-
խանցելուն ի յիշատակ արձան մը կանգնե-
լու համար:

Վ. Գ.

ՔՆՆՈՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԵՆԸ ԶԵՐՈՐՈՒԹՅԱՆ ԳԵՐՄԱՆԸ

Վեթիսիսիսիսիս, 20 Մարտ 1891

Վէօրիսիսիսիս. անձանթ անուն մը, որ
աշխարհացոյց տախտակներու վրայ ցայտմ'չե-
րեւար: Կը մնար անձանթ և անյիշատակ
Պաւլիկայի այս չնչին գիւղիկն, եթէ Քնայր
չըլլար գիւղիկն ժողովրդապետը:

Հազիւ հինգ տարի առաջ (1886) Վէօրիս-
իսիսիսիս (Միլիտէն 2 1/2 ժամ հեռու՝ չոգեկա-
ռօք) ժողովրդապետն՝ Սեբաստիան Քնայր
(Kneipp) հրատարակեց «Իմ լուացմունքս»
(Meine Wasserkur) անուամբ գիրքը: Գիւղն
և ժողովրդապետին անունն սկսաւ ամէն եւ-
րոպական լրագրաց մէջ չըջան ընել, յոմանց

համակրական և յոմանց հենգնական ակնարկ
ընդունելով: Սակայն այս իրականութիւն է՝
որ Քնայրի գիրքն 1890ին վերջն արդէն 24^{րդ}
տպագրութիւնը տեսաւ: Քնայրի հրաշալիք-
ներ պատմութիւնը շատցան և այս օրս շատ
սակաւք են կասկածողք: Իսկ Վէօրիսիսիսիսիս
գարձողք միայն զարմանալի բժշկութիւններ
պատմել գիտեն, որ եղած է իրենց անձին և
այլոց վրայ՝ միայն և միայն ամենապարզ մի-
ջոցով մը, ջրով՝ որ այնչափ մեծ դեր կը կա-
տարէ մաքրութեան մէջ:

Քնայր 70ամեայ ծերունի ժողովրդապետն
երկտասարդութեան ժամանակ նիհար, թո-
քախտաւոր և իրրե կենդանի-մեռեալ մէկն
էր, որ պատճառաւ անկարելի էր եղած իրեն
քահանայական կոչման կարեւոր ուսումներն
յառաջ տանիլ: Գիւղական տնէ սերած՝ քաջ
գիտակ բնական երեւոյթներու, կ'սկսի հի-
ւանդագին երկտասարդ խորհիլ իւր թախ-
ծութեանը մէջ՝ թէ ինչո՞ւ լաւն ու սաղը
ջուր կը սիրեն, ինչո՞ւ թուշուն օրը շատ ան-
գամ բազանիք կ'ընէ, ինչո՞ւ ձին ու եղն ալ տը
է ջրոյ մէջ լուանալ, ինչո՞ւ երբ երեսիս լը-
ւանք՝ կենդանութիւն կ'զգանք ի մեզ: Այս
միջոցին ձեռքը կ'ընայ տեսար մը, որ ջրային
լուացմանց վրայ կը խօսէր. սակայն այնպիսի
գոնգալ եղանակներու վրայ, որ կարգացողին
վրայ սարսուռ կը բերէ, և կը փորձէ՝ առողջու-
թեան բազմանքէն զօրացեալ՝ կէս տարի մը
ամբողջ, սակայն օգուտ մը չի տեսներ, բայց
և ոչ ալ վնաս: Կը շարունակէ լուացմունքն,
աւելի եղանակաւորելով, և նոյն խորհուրդը
կուտայ իւր մէկ ընկերին, որ իրմէ աւելի հի-
ւանդու էր: Ընկերը կը հետևի իւր նշանա-
կած եղանակին և կը բժշկուի. ընկերին բը-
ժշկութեան կը յաջորդէ իւրն, և այսօր եր-
կուքն ալ հասակակից կ'ապրին հսկայ զօրա-
ւոր մարմնով, որոց կենաց տեւողութիւնը
քանի մ'ամիս միայն չնորհէլ բարեհաճած էին
ուսեալ բժիշկները:

Քնայր 30 տարիէ ի վեր ամէնօրեայ փոր-
ձառութեամբն և իրական օրինակներով տե-
սած է որ ամէն հիւանդութեանց աղբւրն
արիւնն է: Եթէ՝ կ'ըսէ, մարմնոյ մէջը կամ
դուրսը կայ որ և է անկանոնութիւն մը, թէ՝
ջրաց, թէ՝ թոքի և թէ՝ մարմնոյ որեւէ ար-
տաքին մասին վրայ, գիտցիր որ արիւնն է
զայն յառաջ բերողն իւր անհաւասար, վնա-
սակար, անկանոն բաղադրութեամբը: Պէտք
է աւելորդն, վնասակարը լուալ հանել, և ա-
հա մարմինը կ'առողջանայ: Եւ ամենեւին զար-
մանք չէ որ արտաքին լուացումը ներքին մա-
քրութիւն յառաջ կը բերէ: Միթէ ջրով չե՞նք
լուանար մարմնոյ արտաքին աղբերը. նոյն
ջուրն իւր լուծիչ և սրբիչ ազդեցութիւնը
հետզհետէ կը ներգործէ նաև մարմնոյ մէջ և
կ'սկսի:

1. Հիւանդութիւնն արեան մէջ լուծել,

2. Լուծածն անջատել,

3. Մաքուր արիւնն իւր կանոնաւոր շրջանին բերել, և

4. Տկտրացեալ ու անօթի գործարաններուն նոր գործունէութիւն տալ:

Այս է Բնայրի ջրարուժական դարմանին տեսականը՝ theorieն: Իսկ գործնականը՝ նոյնպէս պարզ:

Որոնք որ Բնայրի լուսացմանց եղանակին ծանօթ չեն՝ կարող են դիւրաւ նախապաշարուիլ «հայր խնդրի» համար գրող բժիշկներէն, զարհուրելի մարտիրոսութիւն նկատելով Բնայրի լուսացմանը՝ իբր թէ ձկանց պէս միայն ջրոյ մէջ պէտք է մնալ, և եթէ անօթի ես՝ ամենաջրաւոր աղքատին չոր պատառիկն անգամ չկարենաս բերանդ դնել, և և, որոնք միայն ի վնաս մարդկութեան յօգեալ ստուծութիւնք են: Բնայր իւրաքանչիւր բնութեան համեմատ գիտէ իւր ջուրը ջերմացնել և սառեցնել, առաւելու և նուազել: Իսկ կերակրոյ հրաման կուտայ որչափ ակորժակդ կը ներէ, միայն պարզ, բնական, առանց համեմանաց, ամենաաւանդաւոր համեմատը ըլլան: Գինին կամ դարեւորն այնչափ օգուտ չունի առողջ անձանց, որչափ ջուրն ու պտուղն: Եւ ո՞վ որ մի անգամ այս լուսացմանը զգացած մարմնոյ կաղնուրումն ու զօրութիւնն և վաստակած առողջութիւնը կը տեսնէ, այնուհետեւ դժուարութեան և ոչ իսկ հետք մը կը նշմարէ:

Տեսնենք համառօտիւ այս լուսացմանը ու արդիւնքը:

Վէօրիսհոֆէն եկողն (Միւնխէնէ Վէօրիսհոֆէն 3—4 մարքով կարելի է գալ) իրեն բնակարան մը գտնելէն ետեւ՝ առաջին գործը կ'ըլլայ ժողովրդագրական ներկայանալ, ժողովրդագրական առումը 2 ժամ և կէսօրէն ետեւ 3 ժամ որչա՞ծ է առ այս. բայց ամէն օր հասնող հիւանդաց թիւն այնչափ ստուար է, որ այս ժամանակը պահել անկարելի կ'ըլլայ, մանաւանդ ամառն: Բնայր ակնթարթ մը միայն աչքը կը բեւեռէ հիւանդին, որ նոյն միջոցին կը մեկնէ իւր ցաւերն որչափ և կ'ուզէ, և արդէն սկսած կ'ըլլայ Բնայր դեղադիրը գրել տալ առնթերակաց բժշկին: Այս գործողութիւնն 1—2 վայրկեան հազիւ կը տեւէ: Չմոռնամ ըսելու՝ որ միշտ առ նուազն հինգ բժիշկ այլեւայլ տեղերէ ներկայ են ուսումնասիրելու Բնայրեան դրութիւնը, Հիւանդը կ'ընդունի օրինակի համար այսպիսի դեղագիր մը՝

Սրունից լոգանք Կանակի լոգանք
Ծնկաց լոգանք » »
Սրունից լոգանք Ուսոց լոգանք
Ջրոյ մէջ գնալ Սրունից լոգանք:

Եթէ մէկուն վիճակեցաւ այսպիսի դեղագիր մը, կէսօրէն յառաջ սրունից և կէսօրէն ետքը կանակի լոգանք պիտի ընէ, յաջորդ օր երկրորդ կարգը, և և: Սրունից լոգանաց համար, զոր օրինակ՝ ուրիշ բան չունի ընելիք եթէ ոչ ցուրտ ջրոյ մէջ մանեկ մերկասրուն ցծունկն, ջուրն որչափ ցուրտ, նոյնչափ լաւ է, (եթէ այլապէ չի տրամադրեր) և ետեւէն երեք ցնցուղ ցուրտ ջուր մէջքին վրայ դէպ ի վար ընդունիլ, երկուքը ցնցող բերանով (բայց ոչ ցնցողակերպ ծակաբով) և վերջինը մեծ բերնէն: Անմիջապէս դուրս կ'ելլուի և առանց չորցնելու մարմինը՝ չոր ձերմեղեղէն կը հաղնուի, այնուհետեւ կէս ժամ բաց օդոյ մէջ պտտեւելու է: Զգեստը հանելն, լուսացուիլն ու հաղուիլն 3—4 վայրկեան աւելի պէտք չէ տեւել: Միւս լոգանքներն ալ այս կարգի են: Էական պայմաններէն է որ ստամոքսը լեցուն

չըլլայ և ոչ բոլորովին դատարկ, լուսացմանը յառաջ մարմինը քիչ մը տաք ըլլայ, որ վախճանաւ վեր ի վայր արագ քալելու է քանի մը վայրկեան, բայց միայն չքրտնի մարմինը: Լուսացմանը արագ ըլլայ և յետոյ ջուրը չը չորցուի, այլ չոր ձերմեղեղէն հագնուի, և այնուհետեւ ի սկզբան արագ՝ յետոյ հանդարտ կէս ժամու չափ քալուի: Շատ պարագայից մէջ հակառակ վարմունքը փնտաւար կ'ըլլայ: Այս մէկ տեսակն է. կան ուրիշ տեսակ լուսացմանքներ, ցուրտ պատատանքներ եւ այլն, ըստ պիտոյից կազմածին:

Վէօրիսհոֆէն եկողը կը տեսնէ հարիւրաւոր քաղաքացիներ, եկեղեցականներ, որոնք կարծես ծանրակշիւ գործոյ մը համար արագ կը փութան աննպատակ, ոմանք հողաթափ ի ձեռին և բոկոտն թաց խոտերու վրայ ուրախութեամբ կը շրջին, զոր չափ կը յանձնարարէ Բնայր: Այսպիսի պարզ բաղանիք մը մէկ ամսուան համար աւելի արժան կուգայ Վէօրիսհոֆէնի մէջ, քան նշանաւոր բժիշկի մը մէկ այցելութեան դինը: Ժողովրդագրութեան մէկ դասի չափնուր, ջուրն առատ, ամենայն ինչ արժան: Հասարակաց բաղանիքներ թէ և կան երկու հատ, սակայն չեն հասնիր անչափ պիտոյից. մեծամեծ շինութեանց ձեռնարկուք կը պահին, վասն զի Բնայրի լոգանաց կուծութիւնը տեղւոյն ջրոյն վրայ չէ, և անոր համար իրեն հետ տեղն ալ կը դադարի ժամանակաւ այցելուներ ունենալէ:

Ամէն օր մարդ ականատես կ'ըլլայ այս լուսացմանց դարմանալի արդիւնքներուն: Մէկը կը պատմէ քեզի թէ ինքն ամիսներէ վեր գլուխու ցաւ ունէր և քանի մը շաբթու մէջ անցեր է. ուրիշ մը թէ մէկ աչքը չէր տեսներ և բժիշկները չկրցան դարման տանիլ, հոս մէկ ամսուան մէջ տեսութիւն է ստացեր, միւսը թէ անբամալը չէր և դարմանէ յուսահատ եկաւ հոս և այժմ քեզմէ արագ կը քալէ. ուրիշներ՝ թէ մարմնոյ վրայ անբուժելի վէրքեր կամ ջրային ցաւեր, հիւանդութիւններ ունէին, կամ ստամոքսի այնպիսի տկարութիւն որ ամէն կերածին ետ կուգար կամ թոքախտ, քաղցկեղ, ուռեցքներ և և, և, ունէին և այժմ լաւապէս վիճակի մէջ են: Մէկէն չես լսեր որ իրեն օգուտ չէ բրած այս լոգանքը. միթէ ասոնք ամէնքը միարանած են զմեզ խաբելու: Ինքը ժողովրդագրական, որ միշտ լուս և բոլորովին պարզ մէկն է և օժտեալ բնական հանճարով, իւր վերայիչեալ մատենին մէջ 150ի չափ հիւանդութիւններու անուանց տակ՝ կը պատմէ իրական դէպքեր որոնք ամէն օր ալ կը հանդիպին: Մէկն, օրինակի համար, ինծի հետ եկաւ Վէօրիսհոֆէն բաղնիքային միջոցաւ լոգանքը դարման մը գտնելու: Ժողովրդագրութեան տուած վայրի վարդի հունտի ջուրն և լոգանք: Երկրորդ օրը մեկնեցաւ ասիէ նոյն անձն ուրախութեամբ՝ բուժուած իւր անտէն: Կարելի էր այսպիսի բաղնիքի իրական դէպքեր յառաջ բերել:

Հայագրիներէն անցեալ տարի Վէօրիսհոֆէն եկած է Պարսից Գեղարուեստից պաշտօնեայն ձիահանկիր խան և գոհութեամբ մեկնած: Այլապէս ամէն կողմանէ անձինք կան այժմ հոս. իսկ նամակներ կուգան ամէն օր, որոնց պատասխանել մարդասիրաբար յանձն առած են երկու գրագիր. վասն զի ժողովրդագրութեան բաց ի հոգւոյ հոգէն, զբաղած է հիւանդներով, ի վաղ առաւօտէ մինչեւ ցիտր գիշեր: Քանի մ'օր յառաջ ձարոնի կայսրուհիէն ալ նամակ մ'եկած էր: Թերեւս

ոմանց ցանկալի ըլլայ ժողովրդագրական հասցէն. պէտք է գրել գերմ. լեզուաւ այս հասցէին՝ Hoch. H. Pfarrer Sebastian Kneipp. Worishofen (Bayern).

Ահա «կոյրք տեսանէն, կողք գնան, բորոք սրբին» կը յորդորենք հիւանդ աղքատ յիններն, որ եթէ հնար ունին, չգանդաղին Բնայրի «Meine Wasserkur» եւ «So sollt ihr leben» գրքերը ձեռք բերել, և փոխանակ բազմածախ բաղանիքներ յանգուտս դեղերելու կամ ի Պերլին Բոխի թոյնն իրենց արեանն խառնելու, դիմեն ի Վէօրիսհոֆէն և իրենց բժշկութիւնը գտնեն: Դէպ ի Վէօրիսհոֆէն, դէպ ի Բնայր:

(Համդէս Ամստըր)

Ա Յ Յ Ե Լ Ո Ի Մ Ը

ՀԱՆՈՍՈՒԿԱՆ

—

Ո՞Վ ԷՐ

«ՄԵԼԻՍԵՎԵԿ ԱՐԲԱՅ ՍԱՂԻՄԱՅ

Անցեալ տարի «Արեւելք»-ի մէջ «Արա-համու կեցաց բուսական» ծանուցիւնը՝ Յը-նընդոց ԺԴ. գլխոյն մէջ յիշուած անձանց վերաբերեալ մի քանի սեպագիր յիշատակա-րանաց յայտնութեամբ (1): Այսօր ալ մի՛ եւ նոյն վկայութեամբ լուծուած կը տեսնուի այն խնդրի՝ որ պատմաբանից ուշադրութիւ-նը դրաւած է ի վաղուց — թէ ո՞վ էր «Մեւ-քիսեղեկ արքայ Սաղիմայ». վասնզի Սուրբ Գիրք կը վկայէ թէ «Մեւքիսեղեկ արքայ Շաղիմայ (= Սաղիմայ) ... քահանայ էր Աս-տուծոյ բարձրելոյ» (2), և էր «անհայր» ան-մայր՝ չհամարեալ յաղթս, որոյ ոչ սկիզբն ա-ւուրց և ոչ կատարած կենաց. նմանեալ որդ-ւոյն Աստուծոյ՝ չկայ մնայ քահանայ մշտն-ջենաւոր» (3):

Այս քահանայ՝ թագաւոր Մեւքիսեղեկ, «որոյ ոչ սկիզբն աւուրց և ոչ կատարած կենաց», է ժամանակակից Արա-համու. զի պէտ դառնալոյ նորա (Արա-համու) ի կոտո-րածէ՝ Բողոքագոմարայ, և թագաւորացն որ ընդ նմա էին, ... Մեւքիսեղեկ արքայ Շա-ղիմայ եհան հաց և գինի ... և օրհնեաց զԱրամ» (4):

Ահա այս է՝ ըստ Մ. Գրոց՝ մեր բովան-դակ տեղեկութիւնը Մեւքիսեղեկի վրայ:

Սակայն չնորհիւ ընթերցման սեպագրու-թեանց, որ այնքան մեծ լոյս կը տրուեն ստուերամած հին դիպաց վրայ, լուսաւոր-ուած է նաև սոյն կէտ — «մէջ սկիզբն ա-ւուրց և ոչ կատարած կենաց» ունեցող Մեւ-քիսեղեկ՝ առաջաւորական անձնաւորութիւն մը չէ այլ ևս. զայս կը հաստատէ հռչակա-նուն բեւեռագէտն Սէյա՝ բարեկական լեղ-ուաւ գրեալ պնակիտներու (tablettes) վրայ կատարած իւր մասնաւոր ուսումնասիրու-թեամբ (5):

Այդ պնակիտներ երեք տարի առաջ գտնուեցան Տէլ Էլ-Ամառնայի աւերակնե-րէն (6):

Եգիպտական ԺԸՐԳ. հարստութեան Ա-մէնոփիս կամ Ամէնհոտպու Գ. Թերէի մէջ

(1) Տե՛ս Արեւելք թիւ 1869.

(2) Ծնունդք ԺԴ, 18.

(3) Թուղթ առ Եբրայեցիս Է, 3.

(4) Ծնունդք ԺԴ, 17-20.

(5) A. H. SAYCE. — The Sunday School Times. Philadelphia, 1891 Febr. 7.

(6) P. A. DELATTRE. — La trouvaille de Tell el-Amarna. Paris, 1889.

Հաստատեց Ասոնի (= սկաւառակ արեգական) կրօնն: Ասոր որդին Ամէնհոտպու Դ՝ Թերահան քրմութենէն յիշատակ մը չտեսնելու համար մեկնեցաւ Թերէէն ի միջին Եգիպտոս, և Սիլուտէն քիչ մը հիւսիս՝ դեռոյն աջ եղերաց վրայ՝ հաստատեց նոր քաղաք մը (1), զոր՝ ի պատիւ Ասոն աստուծոյ՝ կոչեց Խուսնասոն (= հորիզոն սկաւառակի արեգական), որ է Տէլ Էլ-Ամառնա (2), և նկատելով թէ իւր անուն մէջ Ամոն աստուծոյ յիշատակութիւն կայ, փոխեց ի Խուսնասոն (= պայծառութիւն սկաւառակի արեգական):

Ամէնհոտպու Դ. իւր հետեւորդներով եւ Ասոն աստուծով հաստատուեցաւ ի նոր աստան, որ քիչ ժամանակէն այնքան ծաղկեցաւ մինչ Թերէ և Մեմփիս՝ Եգիպտոսի մէջ երկրորդական կարգ անցան:

Շատ հաւանական է թէ Ամէնհոտպու Դ՝ Թերէէն հետը բերած էր նաեւ գէթ այն սեպագիր անակիտներն՝ զորս հնախոյզը գտան ի Տէլ Էլ-Ամառնա. փոստիկ դոցա մեծագոյն մասը կը կազմէն Բարեւնի, Ասորեոտանեայց և Սուբիոյ թագաւորներէն, և Պաղեստինու եգիպտացի կուսակալներէն, և Եգիպտոսի իշխաններէն առ Գահակալն Եգիպտոսի զորկուած նամակներ:

Այդ գրութեանց ամենէն հետաքրքրականն է Երուսաղիմաց կառավարիչ Երեմ-տոր անուն անձի մը գրածներն, որոց միոյն մէջ կ'ըսէ թէ՝ «Ոչ հայր իմ և ոչ մայր իմ բարեօճարացուցին զիս յայս փիճակ. մարդարեւ թիւն Ամենակարող Թագաւորին եմոյժ զիս «ի տուն հօր իմոյ»: Ուրիշ նամակի մը մէջ «աւելի որոշակի կ'ըսէ՝ «Չեմ կառավարիչ «կարգեալ յարքայէն (Եգիպտոսի) տեառնէ իմմէ: Ասեմ թէ գաղնակից եմ արքային, և «հատուցեալ է իմ զհասն՝ զոր պարտ էի առ «արքայն: Ոչ հայր իմ և ոչ մայր իմ, այլ «պառազամ Ամենակարող թագաւորին հաստատեաց զիս ի տան հօր իմոյ»:

Նոյն ժամանակ այն երկիր՝ որոյ կեդրոնն էր Երուսաղէմ, կը կոչուէր՝ «Երկիր թագաւորին (Եգիպտոսի)»:

«Ամենակարող թագաւորն», որոյ «պառազամ» իւր իշխանութիւնն առաւ Երեմ-տոր, Մորիա լեռան վրայ պաշտուած աստուծոյ արտօնն էր: Այդ աստուծոյ բուն անունը կը տեսնուի նամակաց միոյն մէջ, երբ կը գրէ Երեմ-տոր ի մասին «քաղաքին որ է ի լեռան Երուսաղէմի, այն է Ուրաւ աստուծոյն, որոյ անուն (աստանոր) է Սալմ»:

«Սալմ» կամ «Շալմ» եւս, խաղաղութեան աստուածն, «ի լեռան Երուսաղէմի» պաշտուած աստուծոյ անունն էր, որ կը համապատասխանէր Բարեւացւոյ «Ուրաւ» աստուծոյն, այն է Աբեղակն առաւօտեան:

Որովհետեւ Ուրաւ-Սալմ նամակաց մէջ Երուսաղէմի հաւատար է, մինչ սեպագիր անակիտէ մը կ'ուսանիմք թէ Ուրաւ = «քաղաք» կը նշանակէ, բնական հետեւութիւնը կը լինի թէ «Ուրաւ-սալմ» կամ «Երուսաղէմ» պարտի նշանակել = Գաղափ Սալմ աստուծոյ:

Ահա ուրիշ «Սալմ» աստուծոյ քանակայն էր Երեմ-տոր, որ անոր «պառազամ» աւ կարդուած էր իւր պաշտօնին մէջ. ուստի այն (պաշտօնի գլուխ ան ցնեւուն) տեսակի տիւ էր «անհայր՝ անմայր», քանի որ իւր ծնողքէն չէր ժառանգած զայդ պաշտօն:

(1) G. MASPERO. — Histoire ancienne des peuples de l'Orient. Paris, 1886.
(2) F. LENORMANT. — Histoire ancienne de l'Orient. III. Paris 1883.

Հետեւորար լուծուած կը տեսնուի ուրիշ խնդիր երբ համեմատեմք Ս. Գրոց մէջ յիշուած (Մն. Ժդ. 17-20), և Երբ. է. 3) Մեղքիսեգեհին՝ վերի նամակաց հեղինակ Երեմ-տորի հետ: Աւելի հաստատութիւն կուտայ այն պարագայն թէ Երեմ-տորի նամակները գրուած են «Երուսաղէմ»էն, մինչ Տէլ Էլ-Ամառնայի աւերակաց մէջէն գտնուած ուրիշ նամակներ գրուած են այլ և այլ տեղերէ:

Իւսկիւսար

Կ. Յ. ՊԱՍՏԱՃԵԱՆ

Հ Ի Ն Ձ Ե Ռ Ը Գ Ի Ի Բ

ԱՌԵՏԱՐԱՆ

Նախորդ գրովս տեղեկութիւններ տուած էի Ձեռագիր հին «Ճաշոց Գիրք»ի մը նկատմամբ, և միանգամայն խոստացած էի զրեւ հեղհեղէն ի մասին Հայերէն Ձեռագիր մատենից՝ զորս տեսած եմ Ահաւասիկ՝ մեր նոյն խոստման համեմատ, այս անգամ եւս տեղեկութիւններ կը հաղորդեմք հին ձեռագիր, մագաղաթեայ Աւետարանի մը վրայ, որ պահուած կայ ի Կեսարիա Ս. Աստուածածնայ Մայր-Եկեղեցւոյ գոնձատան մէջ:

Սոյն «ԱՌԵՏԱՐԱՆ» 265 մագաղաթեայ թղթերէ կամ 532 էջերէ կը բաղկանայ. Մեծ Ուրբիւթիւնը՝ 31×22 հարիւրորդամէր է. ԳՐՈՒԹԻՒՆԸ՝ երկուսնակ 23×14 հրդմ, սեւ թանաքով գրուած, և երկու սիւնակներու միջեւ եղած բացութիւնն է Ձ հրդմ. ՏՈՂԲՆ՝ 20. ՆԻԻԹ՝ ընտիր մագաղաթ, մաքուր և ուղիւղ. ԳԻՐԸ՝ կէս երկաթագիր, մի գրչի գործ. ԵԶԵՐԱԶԱՐԻՔԸ՝ թուով 20 էւ, սակայն բոլորն ալ կտրակ, միակերպ շինուած, և խիստ գեղեցիկ. ՏԷՐԸ՝ Տէր Կոստանդին. ԳՐԻՉԸ՝ Կովմա. ՏԵՂԸ և ԺԱՄԱՆԱԿԸ՝ յայտնի չեն, բայց վերջին երկրորդական յիշատակարանի թուականին նայելով՝ երկուստեւորով գարու վերջերը գրուած կրնայ համարուիլ:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԸ. Գիրքն շատ լաւ և մաքուր փճակի մէջ պահուած է, և ամբողջ Ամեն զլոյս սկզբնագրերն են մեծ զարգացիր ոսկեզօծեալ, և անմիջապէս նոյն տողն համակ ոսկեով գրուած, ինչպէս նաեւ ամեն համարներու զլոյսագրերն համակ ոսկի:

Առաջին թղթի ճակատն մեծ խորան մը կայ մեծ եղբրազարդով. խորանի աջակողմէն ներքեւ Հրեշտակի պատկեր, որ և անմիջապէս կ'սկսի «ԳԻՐԸ՝ ԾՆՆԴԻԱՆ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՐԴԻՈՅ ԴԱՌԱՊԵՐԱՆ» զարգացիր: Թուղթ կա էջի ներքեւ գրուած է (այլ գրիչ) նորազարդ «Ու Տէր Պետրոս Արեւայ, մի մոռանար աղաթից, մեղայ, Տէ. Այ. մեղայ, մեղայ թշուառացեալ մեղայ»:

Թուղթ 77ա՝ կը վերջանայ Մատթէոսի Աւետարանն, և անմիջապէս յիշատակարան մը.

«Մտացաւ սորա զԱստուածարեան Սուրբ Եպիսկոպոս Վերադիտող Տանն ՌԱՊԱՆ զՏէր Կոստանդին և զնորհազարդ կրաւորս զեղբայր նորա Տէր զԵպիսկոպոս յիշեալի ի Գոմենայն որդիք լուսոյ որ ետուն զձեւ զկեանսարեւր Սուրբ Աւետարանս ի յիշատակ իւրեանց և ծնաւզաց իւրոց, ամէն: Այլ և զանարժան գրիչս զԿովմա աղաչեմ յիշել արժանի արարէք և Աճ ձեզ ողորմեցի. ամէն»:

Թուղթ 77բ՝ գատարկ, և թուղթ 78ա՝ ճակատը կրկին մեծ խորան մը մեծ եղբրազարդով, խորանի ներքեւ՝ ճակատկողմն, Ասիւծի պատկեր. և կ'սկսի «ՍԿԻԶՐՆ ԱՌԵՏԱՐԱՆԻ. ՅԻ. ՔԻ. ՈՐԴԻՈՅ ԱՅ, ՈՐՊԵՍ ԵՆ

ԳՐԵԱԼ Է Ի ՄՈՐԳԱՐԱՄ, ԱՀԱԻԱՆ», զարգացիր:

Թուղթ 124բ՝ երկրորդ սիւնակի ներքեւ պատկեր մը խաչելութեան, 5,5×7,5 հրդմ. մեծութեամբ, և թուղթ 125բ՝ կը վերջանայ Մարկոսի Աւետարանն և անմիջապէս յիշատակարան. «Չորազան Եպիսկոպոս զՏէր Կոստանդին զստացաւ սորա յիշեալիք ի Գոմենայն: Այլ և զմեղապարա գրիչս զԿովմա»:

Թուղթ 126ա՝ ճակատը մեծ խորան մը մեծ եղբրազարդով. խորանի ներքեւն է եզն. և ապա կ'սկսի Ս. Աւետարանն, «ՔԱՆԶԻ ԲԱԶՈՒՄՔ ՅԱԻԺԱՐԵՅԱՆ ՎԵՐԱՍԻՆ ԿԱՐԳԵԼ ԶՊԱՆ» զարգացիր: Թուղթ 207բ՝ կը վերջանայ Դուկասու Աւետարանն, և ապա յիշատակարան. «ԱՅ պատիւ Եպիսկոպոս զՏէր Գրիգոր Վերադիտող Տանն ՓԱՐԶԱՐԱՆԱՅ Եւ զհրաշալի ծերունի Եղբայր նորա զԿաղաւ կրաւորս յիշեալիք ի Գոմենայն ընթերցողք սորա ամէն: Այլ և զմեղապարա գրիչս զԿովմա աղաչեմ յիշել և ԱՅ զձեզ յիշեալ արժանի արարցէ, ամէն»:

Թուղթ 208ա՝ ճակատը մեծ խորան մը մեծ եղբրազարդով, խորանի ճակատկողմնան ներքեւն է Արծիւն, և կ'սկսի «Ի ՍԿԶՐԱՆԷ ԷՐ ԲԱՆՆ. ԵՆ ԲԱՆՆ ԷՐ ԱՌԱՆ. ԵՆ ԱՅ. ԷՐ ԲԱՆՆ. ԵՆ Ա. Է.», զարգացիր:

Սոյն յիշեալ 4 խորանք, և եղբրազարդ և պատկերք և զարգացիր ճաշակաւոր շինուած, սքանչելի, զմայլելի գեղարուեստ են և ոսկեզօծեալ. եթէ միջոց լինէր, շատ կարեւոր կը համարէի ուրոյ պատկերներն լուսանկարով հանել տալ:

Թուղթ 265ա՝ կը վերջանայ Յովհաննու Աւետարանն և ապա յիշատակարան մը. «Փառք Սուրբ Երրորդութեան յաւիտեանս ամէն, որ ներեալ մեզաց իմոց եւ գաւրութիւն եղկելի և թշուառացեալ մատամբ իմով կատարել զՍուրբս զայս»:

Թուղթ 265բ՝ երկրորդ յիշատակարան մը՝ բոլորագիր և նոր գրիչ, որ է՝ ի Թուական Յուլիանոս Հայոց ի յետին հարիւր ու ժիւն (=1269). «Եւ Տէր Սիւրբ Առաքնորդ Սուրբ Ռախիս Աբխայլոնոյս, որ վերստին ստացայ զՍր Աւետարանս, ի յիշատակ ինձ և ծնաւզաց իմոց, և ամենայն զարմից, բայց դուք, ով սուրբ Եղբայրք, զառք լուսերամից, յիշեալիք... զՏէր Կիւրմի և զձեռուս նորա ի յաղաթս ձեր, զի և զմեզ և զձեզ յիշեցէ Գոմէն ի գաղտեան իւրում, և նմա փառք յաւիտեանս յաւիտեանց, ամէն: Նաեւ զարտէ խոցեալս Սարգիս գրիչ, և զՎարդան Երեմեյան ընկալցի ամենարարին Յոս, իրրեւ զերկուս խեբեկէս այրոյն: Եւ նմա փառք յաւիտեանս»:

Սոյն երկրորդ և վերջին յիշատակարանէն զինի՝ գիրքը կը լրանայ, թէ և երեք պարզ թուղթ ևս կայ դատարկ: Չի մոռանալք ըսել թէ՝ սոյն Աւետարանին արտաքին երկու երեսներն արծաթապատուած են հետեւեալ յիշատակարանաւ.

«ՅԷԿԷ. Սր. Աւետարանս, Կեսարացի, Ֆիրնկորդի, հանդուցեալ, Սարգսի որդի, մահի Աճատուրին, և կողացուն, Հրէրսիմիւն, ի Դուրն, Կեսարիոյ, Սր Աճածնա, Եկեղեցուն, և զնկեցեւոյ, հոգոյն. ԹՎԻՆ. ՌՄՄԷ. (=1808):

Կը խոստանալք գրել յառաջիկային տեւի հին Աւետարանի մը մասին:

Կեսարեա

ՏՐԴԱՏ Վ. ՊԱԼԵԱՆ

1891 մայիս 1

Վերապիւ. — Նախորդ յօդուածին մէջ (Մայիսի, թիւ 32), Յրդ Երես, Յրդ սիւնակ, 21րդ տողի (զարէն համբերով) «գաւնակ» բառը «թանաք» պիտի լինի, և Կրդ Երես, 2րդ սիւնակ, 8րդ տողի «ի խաչել» բառն «ի խաչել» պիտի լինի:

Ե Ր Ա Ձ Ն

Լաւ չը յիշեմ թէ ո՛ր էր վայրն այն գեղեցիկ Յորոմ կայի ես լուռ եւ մոռնալ, հոգեւով մենիկ. Արդեօք ծովափն էր թէ՛ վրձնիտ ու ջինջ առու,

Կամ կը խորհի՞ր թէ չէ՛ր արդեօք Մօտա-Պոլսոն:

Երեկոյ էր. արեւն ի մուսս ղողէր տակաւ, Ոյր նըշուկից ունի միշտ սիրտս անձուկ անբա՛ւ. Նոցւոյ մը տակ որ գոգ կուլար՝ ի ծովիս անկած:

Կը նստէի ես ակնապիշ դէպ յայն նաւակ Որ ընդ ալիս Մարմարայի թռչէր ի բաց Արագասան, որպէս կարապ ի թեւ սպիտակ. Եւ առ ափամբք՝ հագիւ շրշիւն մ'անգոր թեմեւ:

Թէ խրոպէր լըռիկ նոցին գլխուս վերեւ. Նըւագ թռչնոց եւ ո՛չ ուստեք լինէր ինձ լու, Ընդ որս էր վարժ երգել հոգիս մերթ ալելու. Անդ հեռաւոր մարգաց վերայ մանկտի մատաղ Ուրախ զըւարթ վազվազելով կ'ընէին խաղ. Զէր պատահած նոցա երբեք սեւա փոփոքիկ. Զէին գիտեր թէ ծով կ'ենաց չէ միշտ հեղիկ. Մինչ լուսնեկին արծաթի ջինջ հաւագայիմներ Կը խըլէին բերնէս մրմունջ հեզ աղօթկեր. Մինչ թեւաբաց հիւր կուգային հոյք զը-ւարթնոց՝

Ծաւալելով ի մէջ սրտիս խանդ, հուր եւ բոց, Ալ երջանիկ կը գգայի զիս. ո՛չ եւս յոյզեր Զերդ յամբոխեալ ծով կոծէին հոգիս յերեր. Զեփիւռն անոյշ ի՞նչ կը հծծէր, զայդ չը յիշեմ:

Յիշեմ եւեթ զի գգուէր զիս ի համբոյր մեղմ. Զմայլեալ աչկունքս, զըւարթութեան յար ի փղծուկ,

Սեւեռէի յերկինս ի վեր անխօս անշշուկ. Այլ բարձանց մէջ զո՞վ որոնել արդեօք գնային, Ի տես արդեօք ամենակալ մեծ յօրինչին...

Բայց շուտ կորոյս բընում իւն զիւր հրապոյր քաղցրիկ.

Սեւա ամպոց տակ ծածկեց զիւր դէմս լուսնոյ մահիկ.

Մերթ կ'որոտար երկինք ի ձայն մահաշըշուկ՝ Խըռովելով վայրն այն անդորր եւ անաղմուկ. Երկնից ծոցէն հուր կայծակներ թօթափելով՝ Անհուն անբաւ այերաց մէջ դնէին խըռով եւ հողմախիլ եղած անոյշ ծաղկանց թերթեր Յիւր աստ եւ անդ կը խնդրէին իւրեանց դաշտեր:

Սարսըռայի պահ մը տրտում եւ գլխիկոր, Եւ միայնակ կայի, վարանս ես անդանօր. Հուսկ խոյս անտի գընալ խորհիմ փախստական Եւ պարտասեալ կը ժամանեմ ի սեամս տան. Յայն վայր անդուլ կը հալածեն զիս ծիւն ու բուք.

Զարթնում ընդոստ. երազ մի էր այս վաղանցուկ:

Այսպէս անա վաղազրրաւ եւ կեանք մարդկան, Լի պատրանք եւն հանապազ փոփոխական. Խինդ եւ ժըպիտ, զոր կը կարծեմք յար անբաժան,

Յական քեմեւ թողլով ըզմեզ յերկին սլանան. Ե ի Տ Ե Ր Պ Է

Գործնական Քերականութիւն Ֆրանսերէն լեզուի. 2,500 հրահանգներով. ի պէտս նախարարութեան բարձրագոյն կարգաց. Բ. տը-պագրութիւն. հետեւողութեամբ Լ. Լըբլէրի, աշխատասիրաց Ա. Պիպէռնէան. Գին 5 զրշ:

ԱՐԵՒԵԼԲԻ «ՀՐԱՆՏ» ԻՆ

Արեւելք թերթում յաճախ լոյս տեսնող անմիտ, ցնորական յողուածները կարգաւորվ, քանիցս մտածել եմ մի երկու խօսք գրել, — չի եղել, գրիչս ակամայ յառաջ չի գնացել, ենթագրելով թէ գուցէ Պօլսոյ Հայ ընթերցողները կարողանում են մարտել այդ տեսակ գլուածքները, գուցէ նրանց ճշակը ընդու-նակ է երեւակայական ցնորքներով միայն յա-գենալու...

Եւ իրաւունք ունէի ենթադրելու. Տեսնելով որ այդ կարգի բանաստեղծութիւն ան-ուանեալ ցնորքանութիւնները լափվում են հասարակութիւնից, որ սքանչանում է այդ անմիտ, անբովանդակ տողերով, ուրիշ ոչինչ մտում չէր ինձ անել, եթէ ոչ — ձեռք ծալած կանգնել և զարմանալ նրանց տարօրինակ ճա-շակի վրայ:

Սակայն բաւական ժամանակ է, — ճիշդ Նոր-Դարի Պօլսոյ մասնաւոր թղթակցի հար-ուածից յետոյ, — այդ երեւելի բանաստեղծ, գրագէտ և փիլիսոփայները քաշուելով լրագ-րական ասպարիզից, ամբողջ թողնում ինչ որ նոր ուժերի — Ֆանտազիօն, Հրանտին և իւր նմանաց:

Այս վերջիններից մէկը իւր Ֆանտաստիա-կան ուրուականների շուրջը թափառելով, միւսը մեռելոց դիակների և զարկոյ կոչեց-եալ դասակարգի մէջ խարխալելով, իսկա-պէս մեր զանգի տարան (գլուխ ուռեցնել):

Որքան էլ ցաւալի լինի ինձ այս մասին ժամանակ կորուստներով որ և է բան գրել, պէտք է ջանամ մի քանի խօսք ուղղել գոնէ Հրանտին:

Հրանտ էֆէնտի.՝ Կարծեմ այն ժամանակ դուք կարգաւ գի-տէիք, երբ մեռաւ Յ. Մելիք-Յակոբեանը (Բաֆֆի): Բաֆֆին, որ հայ վիպասանու-թիւնը յեղաշրջող անձնաւորութիւններից մէկն էր Հայերիս մէջ, ի՞նչ գրուեցաւ նրա վրայօք: Ահա թէ ինչ. հետեւելով կենսագը-րութեան ընդհանուր օրէնքին, գրուեցաւ թէ ո՞ր տեղացի էր, ո՞րտեղ ուսում առել կամ ի՞նչպիսի պայմանների մէջ, ո՞րպիսի զարգաց-ման տէր էր կամ ի՞նչպիսի ձգտումներ ունէր. գալով այն բանին՝ թէ Հայ ազգի ողորդ ու սուգը դէպ ի Բաֆֆի մահը ինչի մէջ է կայանում, թուուեցաւ նրա արծարծած գաղափարները և աշխատասիրած ընդարձակ գրութիւններն... և այս բոլորը զետեղուեցաւ լրագրական որ և է 3-4 սիւնակների մէջ: Դեռ պատահեցան թերթեր, որ աւելի կարճ գրեցին, աչքի ա-ռաջ ունեւելով, որ որքան հակիրճ, այնքան մեծ ազդեցութիւն է գործում ընթերցողների վրայ:

Սակայն դուք, Հրանտ էֆէնտի, գրում էք ամէն մի պատահական մեռեալի մասին, այն էլ ամբողջ մի դայլի շարական, միտե-լով «Արեւելք»ի բոլոր սիւնակները, ունենար այդ մեռեալը բարեմասնութիւն կամ չարա-մասնութիւն...

Հէնց ձեր այդ Միսաքեանը: Մեռաւ նա (հանգիստ իւր հոգուն), վտեցաւ, իսկ ձեր զահլատար գովքը դէպ ի այդ անյայտ մարդը Արեւելքի երեք թէ չորս թերթերը միտեցին: Հարց է. ո՞վ էր Միսաքեանը, որին աշխա-տում էք հաւաստեցնել Հոռոմի Պապին:

Ներիւր, բարեկամ, մի միջադէպ պիտի պատմեմ:

86-87 թուականներում Աղէքսանդր Ծա-տուրեանը, որ յայտնի է իւր կոխիկ բանաստեղծութիւններով ու շնորհալի թարգմանու-թիւններով, հիւանդացաւ. թոքախտ կար-ծելով ինձ հիւանդանոց, Միւս զիւր թոքախտի հիւանդանոց, իսկ նա հիւանդանոց գնա-լուց ասալ իմ հասցէին մի նամակ է թողել: Շտապեցի ստանալ, կարդացի... ի՞նչ էր գրել, գիտէ՞ք. նա կարծելով թէ հիւանդու-թիւնը վտանգաւոր է և կարող է միւս աչ-խարհը գնալ, իւր նամակով խնդրում էր, որ խոստանամ մահից յետոյ մի գեղեցիկ դամ-բանական գրել... բարեաղբարար նա այ-սօր էլ կենդանի է:

Եւ այս դէպքը ինձ հետ պատահելէն յե-տոյ, արդեօք իրաւունք չունիմ ենթադրելու թէ Միսաքեանը և միւսները իրենց մահից ա-ռաջ վարձած լինին ձեզ որ իւրեանց համար դամբանականներ գրէք ու մեծ մարդկանց շար-քում դասէք, աչքի առաջ ունեւելով, որ դուք ընդունակ էք կանաչ ու կարմիր ստերով մար-դուն մինչև Ուիլիսոնի բարձունքը հանել և ժամանակ ունիք մեռելոց դագաղների յետե-ւից քարշ գալով, նրանց դատարի կուրծքն ու գլուխն ուսումնասիրելու...

Հանգուցեալ Միսաքեանի մասին ձեր դը-րածը, որ ահագին տեղ է գրաւել թերթի էջերում, այնքան անիմաստ, անբովանդակ է որ մարդ ձանձրանում է անգամ ծայրէ ցծայր կարգաւ. մի խօսքով կատարեալ բառախառնու-թիւն է կարծես շարել էք հէնց նրա համար, որ ցոյց տաք թէ այդքան բառեր գիտէք: Ամբողջ ձեր այդ գրութեան ողին կարելի էր զետեղել առ առաւելն քսան տողերի մէջ, ո-րը աւելի գեղեցիկ ու հասկանալի կը լինէր:

Ի՞նչ հարկաւոր է երկար խօսիլ. դուք պէտք է գիտնաք թէ լրագրութիւնը այս կամ այն ծանօթին եօթներորդ երկինքը վարձ-կանարար բարձրացնելու ասպարէզ չէ, այլ լուրջ գաղափարների արտայայտիչ և ժողովրդ-դին առաջնորդ:

Դիցուք թէ Արեւելքի վարչութիւնը, չը գիտեմ չլացած ինչով, թերթի էջերը փռել է ձեր առաջ, բայց դուք և ձեր նման ֆանտա-զիաներդ միթէ այնքան անխիղճ էք որ այդ ազատութիւնը ի չարն էք գործ դնում, որ էջերը լցնում էք ցնորքանութիւններով:

Պակաս են մեր մէջ նիւթեր, պակաս են գաղափարներ:

Գոնէ ավստոսացէք այն դրամին, որ ժողո-վուրդը վճարում է որպէս բաժանորդագին, իսկ օգտակար գաղափարաց փոխանակ ան-գիտակցաբար կլանում է օդ, մի միայն օդ, Ֆանտազիօների ու Հրանտների գլխից փչած:

1891 Ապրիլ 9

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ղ

Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ա Կ Ա Ն

Ի Ր Ա Գ Ի Տ Ո Ի Թ Ի Ի Ն
(Շար. նախորդ քիւլէն)

Իրադիտութեան դասուց մէջ յաջողելու համար, կարեւոր է զայն պատրաստել խնա-մով: Երբ ուսուցիչն իւր աշակերտաց առջևը կուգայ դաս տալու, պարտի դասին նիւթը լաւ դժած լինի իւր մտայնը մէջ, և կատա-րեալապէս գիտնալ ինչ որ պիտի ըսէ:

Այս տեսակ դասերն են որ կը պահանջեն ամենէ ուշադիր ուսումնասիրութիւնը: Ու-սուցիչն ընդհանրապէս իւր յատուկ հնարք-ներուն կը վստահի, և եթէ, իւր կարողու-թեանց չափազանց կարեւորութիւն տալով չէ պատրաստած դասն զորմէ պիտի խօսի,

պիտի զգայ իւր մէջ զգացումներ նման այն զգացմանց զորս մարդ կ'զգայ երբ Ուիլիամս-սին վրայ գտնուի առանց առաջնորդի, ան- նըպատակ, մերթ այս և մերթ այն առարկա- յին կ'առջեւով և բնաւ բան մը չտեսնելով ու- րոշակի:

Լուրջ ուսումնասիրութեան և պատշաճ պատրաստութեան զանցառութեան է որ ընդ- հանրապէս իրադրութեան ուսուցիչք չեն յաջողիր:

Եւ արդարեւ, փորձառութիւնը հաստա- տած է թէ նիւթ մը որ նախապէս չէ պատ- րաստուած, ընդհանրապէս անթրոշ, չփոթ և թեթեւ կերպով կը ճառուի: Ընդհակառակն, լաւ պատրաստուած նիւթ մը կը ճառուի ե- ռանգեամբ, յստակօրէն, և կ'արտադրէ այն արդիւնք զոր կ'ակնկալէինք անտի:

Երբ դասին նիւթը լաւ որոշուած է, ու- սուցիչը պարտաւոր կը լինի միշտ ի վեր հա- նել սխալները, դիտել տալ զանցառութիւն- ները, աշակերտաց հետազոտութեանը են- թարկել զժողովին կէտերը, և խմատու- թեամբ աստիճանաօրէն կարգ մը հարցում- ներով առաջնորդել զնոսա դէպ յայն նպա- տակ ուր կ'ուզէինք բերել հասցունել:

Գալով իրադրութեան նիւթոյն, պիտի ըսեմ թէ այնպիսի նիւթ մ'ըլլալու է այն, որ աշակերտը միշտ կարող լինի զայն ամբող- ջովին հասկնալ դասէն ետք:

Իրադրութեան դասուց մէջ, եթէ ընդ- հանրապէս սխալ մը կը գործուի, այն ալ այնպիսի նիւթեր ընտրելն է զորս տղաք դըժ- ուարաւ կը հասկնան: Այս պարագային մէջ տղան չփոթ գաղափար մը միայն կրնայ ունե- նալ դասին վրայ, որ իրեն համար հեռաւոր բան մ'է, զոր կատարեալ կերպով չլինար տեսնել և զոր ո'չ կրնայ ըմբռնել և ո'չ խիստ միտքը պահել: Իրաւ է որ աշակերտը պիտի կարողանայ բան մը սովորիլ այն առարկայից վրայ որք կը ներկայացունի իրեն, բայց այս ծանօթութիւններն այնպիսի վերացեալ բա- ռերով աւանդուած պիտի լինին որ զայնս երբեք չստացածի պէս պիտի լինի:

Մանկան միտքը չհրապուրուիր այն բա- նէն որ վերացեալ է: Ուսման ճաշակն ու սէրը զարթոյցանելու համար ի նմա, պէտք է որ նիւթն ամենէ թանձրացեալ կերպով ներկա- յացուի: Ուսուցիչը թող առաջնորդէ աշա- կերան բնութեան ընդարձակ դաշտերուն մէջ, թող անցունէ զնոսա կիրճերէ, ձորերէ, անտառներէ, հոս և հոն ցոյց թող տայ նո- ցա սեպած և ժայռեր, և հեղեղներ՝ որք շա- ռաշելով կը գահավիժին: Մայր բնութիւնը շատ բան ցոյց կուտայ մեզ, բաներ՝ որք յոր- մար են միտքն աւելի ազնիւ և աւելի սուրբ խորհրդոց առաջնորդելու: Բնութեան մեծա- պայծառ գործոցն ի հանդէս՝ մարդ կ'զգայ իւր մէջ այն ներքին մղումներ որք իւր հո- գին կը թեւաւորեն, կը բարձրացունեն դէպ յայն էակ որ արարիչն ու բարերարն է ամ- բողջ մարդկութեան: Իւր անբաւ գիտութիւն և իւր սիրալիր գործով միշտ կը հսկեն մեր վը- րայ: Աստուծոյ գործերն իրենց մեծութեան և իրենց չափերէն մէջ նկատելով, կը տեսնենք իւր անհուն գործիչ ու բարութիւ- նը, և ճշմարտին, գեղեցիկին ու բարեոյն գա- ղափարներն զոր ունիմք՝ կը ներգաշնակին երկնային աղբեր հետ՝ ուստի կը ըզխին նոքա:

Նայեալս հանքային, բուսական և կենդա- նական ցեղերուն մէջ եւս կը գտնեմք բեղուն և բազմազան նիւթեր իրադրութեան դա- սուց համար: Գրեթէ այն ամէն կենդանիներ,

որք ընտանի են մանկան, կրնան իրադրութե- թեան կարեւոր դասուց մը նիւթը կազմել: Նոքօք կարելի է ուսուցանել նմա շատ մը մանրամասնութիւններ զորս կ'անդիտանայ, վասն զի բաւական ուշադրութեամբ չէ դի- տած այս կենդանիները:

Զարմանալի իրողութիւն մը, որ ոչ նուազ ճշմարիտ է, սա է թէ շատ մարդիկ որոց միտ- քը յոյժ զարգացած է, կ'անդիտանան կարգ մը մանրամասնութիւններ ամենէ հասարակ առարկայից նկատմամբ: Այս պարագային մէջ, կարեւոր չէ՞ միթէ իրադրութեան դասուց համար ամենէ հասարակ առարկայներ ընտ- րել բնութեան:

Բուսական ցեղն ընդարձակ դաշտ մը կը ներկայէ յորում կարելի է երթալ փնտռել ի- րադրութեան դասուց համար նիւթեր: Տունկը, ծառը, տերեւը, իւրաքանչիւրն կըր- նայ իրադրութեան դասի նիւթ մատակա- րարել: Զոր օրինակ, առէ՛ք տերեւ մը: Տը- ղան իրրեւ տերեւի նայած է ցարդ այնմ: Զէ մտածած երբեք թէ տերեւը զանազան մասեր, ձև, տարածութիւն և ուրիշ շատ մը յատկու- թիւններ ունէր: Երբ ուսուցիչը ու է նիւ- թի վրայ դաս տալ կ'ուզէ, աղէկ կ'ընէ եթէ յառաջագոյն իմացունէ աշակերտաց թէ ինչ պիտի լինի յաջորդ դասին նիւթը, որպէս զի աշակերտք ժամանակ ունենան հաւաքելու դասին վերաբերեալ տեղեկութիւններ: Եթէ, զոր օրինակ, տերեւի մը վրայ պիտի խօսուի, աշակերտք ժամանակ կ'ունենան այլ և այլ տեսակ տերեւներ ժողովելու և դասարան բե- րելու: Տերեւին այլ և այլ մասերն, և այլ և այլ յատկութիւնները յերեւան ածել տալէ, աշակերտները տերեւոց այլ և այլ տեսակնե- րուն ընտանեցունելէ յետոյ, ժամ է յայն- ժամ ուսուցանել նոցա այն եզրեր որք բու- սաբանութեան մէջ կը գործածուին: Այս դա- սերը տալու ատեն, ուսուցիչը պարտի միշտ ի մտի ունել թէ իւր նպատակը չալիտի լինի՝ ծանօթութիւններ խառն ի խառն աշակերտաց մտացը մէջ զրգել, նման ծովային մամուռ, նման այն կոսմաց զորս ծովի իւր օփանց վը- րայ կը գլորտէ: Իւր նպատակը պիտի լինի, ինչպէս արդէն ըսի, զարգացնել և կազ- մուրել մանկան մտաւոր կարողութիւնները:

Մեծ սխալ մ'է կարծելը թէ իրադրութե- թեան դասերով կարելի է մշակել միայն զգա- յարանաց միջոցաւ ստացուած ըմբռնումը: Ճշմարիտ է որ, մանկութեան մէջ, զգայա- րանաց միջոցաւ ըմբռնելու կարողութիւնը՝ միւս կարողութիւններէն աւելի գործօն վի- ճակի մէջ կը գտնուի: Բայց այս բանը պատ- ճառ մը չէ որ բոլորովին անով զբաղիմք:

Տղան ոչ միայն կրնայ տեսնել զառարկայն, այլ և կրնայ այդ առարկային նկատմամբ շատ մը բաներ սովորիլ, զորս միտքը կը պահէ և ի հարկին կը կրկնէ: Ասով նորա յիշողութիւնը կը մարդի: Տղան իւր տեսած առարկային պատ- կերը միտքը կը բերէ, չէ թէ այնպէս ինչ- պէս որ վարժապետը ցուցուց զայն իրեն, այլ նորանոր բաներ աւելցունելով նախատպին վրայ: Այսպէս մտքին մէջ կը շինէ ամենազե- ղեցիկ առարկայ մը զոր երբեք չէ տեսած: Այսու նորա երեւակայութիւնը կը մարդի: Զառարկայս չօշափելով, տղան կը բաղդատէ զայնս, կը դիտէ նոցա մէջ գտնուած յարա- բերութիւնները, նոցա նմանութիւններն ու տարբերութիւնները: Այսու ևս նորա իմա- ցականութիւնը կը մարդի:

Իրադրութիւնն ուրեմն մտքին ամէն կա- րողութիւններն ալ գործունեայ վիճակի մէջ

կը դնէ: Բայց աւելի կամ նուազ աստիճա- նաւ:

Պաքոն առաջին եղաւ որ թանձրացեալ ձևն ուսուցման մէջ մտցուց: Իւր ամէն մտա- ծութիւններն ա՛յս կերպով ներկայացուց նա աշխարհի: Դպրոց չհիմնեց, այլ ասկէ աւելի կարեւոր բան մ'ըրաւ: Իյայտ բերաւ այն մե- թոտ որ կը կայանայ ուղղակի կերպով բնու- թիւնը հետազոտելոյն մէջ: Մեթոտ մ'է սա ամենուն դիւրամատչելի, որով կարելի է ու- սանողին միտքը անուցանել՝ առանց մատենա- դարանաց գանձուցը դիմելու: Բնութիւնը մեր առջև կը պարզէ ընդարձակ դաշտ մը ուրիշ կրնամք առատ հունձք քաղել:

Բնութիւնը կը ներկայէ մեզ շատ իրողու- թիւններ կարեւոր և յանկուցիչ որք կրնան զմեզ կրթել: Փորձառութիւնը կը ցուցունէ՞ մեզ թէ ամէն ձեռնարկութեանց ալ սկզբուն- քը լաւ պէտք է լինի: Էսական պէտք մը չէ ուրեմն որ վարժապետը լաւ հասկցած լինի մանկան կրթութիւնը լաւ հիմանց վրայ դը- նելու կարեւորութիւնը: Արդարեւ, եթէ այս հիմը լաւ է, հաստատ է, տղան մեծցած ա- տեն իսկոյն իյայտ կը բերէ այն վրէպ որ սպրդած է ուսուցման մեթոտին մէջ, և բը- նականաբար կ'զգուշանայ անտի: Բայց եթէ ընդհակառակը, բոլորովին վերացեալ կերպով սովորած է գիտութիւնը, եթէ իւր մտքին մէջ բան մը հաստատուն հիմ չունի, բոլոր սով- րածը սխալ չփոթ պիտի լինի և գործնական կենաց մէջ բնաւ օգուտ մը չալիտի ընծայէ իրեն: Պարտիզպանն իւր հոգածութիւնը մա- տաղ տնկոց վրայ կը կեդրոնացունէ, զայնս ուղածին պէս կը մեծցունէ և կ'ուղղէ: Յի- նաւորց տունկերը նուաղ խնամքի կարօտ են, զի աւելի տոկուն են: Ծիւղէ այսպէս է տղուն միտքը: աւելի՛ խնամք կը պահանջէ, կ'ազ- դուրուելու պէտք ունի, երկչոտ է: Վափ- կութեամբ առաջնորդելու է զայն գիտու- թեանց դաշտին մէջ: Արդ, այս նպատակին հասնելու համար, կա՞յ լաւագոյն միջոց մը քան դրութիւնն այն դասուց որք լաւ սահ- մանեալ յատակագծի մը վրայ հիմնեալ են: Կը պնդեմք թէ իրադրութեան դասերը կա- րեւոր են, զի կը մատակարարեն մեզ իրողու- թիւններ որք կը կազմեն գիտութեան հիմն ու շէնքը:

Թարգմ. Ս. Պ. Ո. Զ.

ԵՐԿՐԻ ԱՊԱԳԱՅՆ

Գիտական աշխատի մէջ դեռ երկրաբա- նական ստուարաթիւ խնդիրներ վիճաբանու- թեան տակ են, և արդի գիտութիւնը տա- կաւին նոցա լուծման մասին իւր վերջին բա- ուր չէ արտասանած: աստի ծնունդ առած է տարակարծութիւնն ընդ մէջ գիտնոց, և իւ- րաքանչիւր գրութեան պաշտպան հանդիսա- ցող կուսակցութիւն առաւել կամ նուազ իւր համոզիչ փաստերն յառաջ կը բերէ:

Այս կարգի խնդիրներէն է նաև երկրիս ապագայն, որոյ վրայ անցեալները ԾԱՂԻԿԻ մէջ ըյս տեսած էր շահեկան մի յօդուած: Իմեք եւս կը թարգմանեմք աստանօր Տոքթ. Սաֆոնովի մի գրութիւնն մի և նոյն նիւթին վերայ, և կը յուսամք որ ԾԱՂԻԿԻ Ազնիւ Տնօրէնն կը բարեհաճի զայն ևս իւր հետա- քրքիր ընթերցունհաց ու խոհուն ընթերցո- ղաց ներկայացնել:

Թարգմանիչն

Ամէն բանաւոր էակի համար բոլորովին բնական է հարցնել իւրովի թէ ի՞նչ պիտի

լինի երկրի ասպագայն: Յանգզնութիւն է այս խնդիրը ներկայացնել մեզ: Մտածողութիւնն ու գիտութիւնը կը յուսացնեն մեզ այդ խնդրոյ լուծումն: Նոյնպէս ալ, երկրի անցելոյն և շատ մը երևութիւն մէջ որոյ թատրն է ինք, կը տեսնեմք իրողութիւններ, անբացատրելի, մեր խոզարկութեանց անմատչելի, մեր մշտաց հնարքներէն դերագոյն, զմեզ անկարող կ'զգամք մինչև ծայրն իւր ճակատագիրը կանխագուշակելու: Բայց անգամ մը որ մտքի անկարողութիւնն ճանչցուի, մարդկային գիտութիւնն կրնայ փորձել, զհետ պնդելով երկրին պատմութեան գլխաւոր պարագայի, մինչև անորոշ ասպագայ մը: Խնդիր չեն բանաստեղծական առասպելներ, անհունութեան մէջ երևակայական ճամբորդութիւններ, այլ՝ պարզ հետեւութիւններ մեր մոլորակին կամ մեր գիտողութեանց գիւրամատչելի աշխարհին մէջ հաստատեալ իրողութեանց վրայ հիմնուած:

Աշխարհներու նուագահանգիսին մէջ անընթացելի հիւլէ, առաւել աննշան քան աւազի մը հատիկն արեգական նկատմամբ, երկիրը, անսահման անջրպետին մէջ կը հեռան մի բարեշրջութեան (évolution): Իրաւամբ զարմանալով իւր յարաբերական փոքրութեան վերայ, նոյնքան առաւել կը հիւսնամբ տեսնելով այն համերաշխութիւնն որ զինքը կը միացնէ ստեղծագործութեան ամբողջութեան: Ուսումնասիրել իւր անցեալը, յառաջանալ է զէպ յանցեալն արարչագործութեան, հարցաւորել իւր ասպագայն, թափանցել է՝ միջոցին ժամանակներէն անդին՝ տիեզերքի նախասահմանութեան:

Երկնից մէջ, մեզի մօտիկ, բազմաթիւ եզր մ'ունիմք, որ շատ օգտակար է մեր պատճառարանութիւններն երկրի ասպագային վերայ հիմնելու համար: Լուսինը, իւր արբանեակը, մի հատակոտոր է՝ երբեմն անջատեալ իւր զանգուածէն, որպէս երկրին անջատեցաւ արեգական զանգուածէն, նոյնպէս և բոլոր մեր գրութեան մոլորակունք: Արգ, լուսինը, երկրէն 49 անգամ փոքր լինելով, իւր բարեշրջութեան շրջաններն առաւել արագորար կրցած է ընթանալ: Իւր արդի վիճակը կը ներկայացնէ մին այն վիճակներէն յորոց պիտի անցնի մեր երկրագունդն:

Գիտեմք թէ, բնականօրէն կ'մտնեն իրար մօտ միմեկին, կ'առնեն իրարմէն, իւրեանց հատակոտորներու բարդ ի բարդ կուտակմամբ, քարային հարուստ շարքեր որք ովկիանոսաց ու լճերու յատակները բարձրացուցած են: Նոյն պատճառը պիտի գործէ մի և նոյն համեմատութեամբ, ցորչալի ջուրերն ատակ լինին կեանք պահպանելու: Միւս կողմանէ, տեսած եմք որ տարեք միահամուռ կը գործեն բրկատեղու (ecréter) լեւոնց սարերն, հարթելու ցամաք աշխարհներն, որոց կաւացեալ մասունք, ծովը թափող գետերու հետ ընդ քարէ կ'աճին: Եթէ յարոյցներն՝ համեմատական նոյն՝ որք լեւներ արտադրած են, այս հարթութեան գործը չը փոխարինէին, հաստատուն երկիրն ամենեւին պիտի աներևութանար ջուրերուն տակ: Բայց ի շնորհս ինչ ինչ մասերու արտարարչութեան, հաւանական է որ արդի երկրներու գրաւումը պիտի փոխարինուի մակերևութից արտածագմամբ:

Մեր աչաց սոջեւ ունիմք այնպիսի օրինակներ, որ մեզ թոյլ կուտան կանխատեսել

այս փոփոխութեանց մի մասն: Պալթիկ ծովը, որ աստիճանաբար կը լենայ իւր մէջ թափող գետերու յուզումներէն, խորութեամբ և լայնութեամբ կը նուազի: Դիւրաւ գուշակելի ժամանակի մը մէջ անուշ ջրի լճերու շարք մը պիտի լինի այն, մեծ գետի մը անցք տուող, որ վերջապէս պիտի լեցնէ լճերն և մեծ վայելչութեամբ հովտին մէջէն պիտի հոսի: Մեր Միջերկրականն մի և նոյն բազմիւն պիտի արժանանայ: Կասպից ծովը, որ երբեմն Եւքսինեան Պոնտոսէն ի Սառուցեալ Ովկիանոս կը տարածուէր, պիտի շարունակէ չորնալ չոր գիացմամբ, — որ իւր ընդունած ջրէն աւելին կը բառնայ իրմէ, և աղի անհուն դաշտ մի պիտի դառնայ, յորում ջուրը ընթացքներ պիտի կորնչին աւազներէն ծծուելով:

Բոլորովին տարբեր կարգի պատճառ մը ծովերու տեղափոխութեան պիտի նպաստէ: Ծովախաղացներու ալեաց շարժումն երկրի թաւալման շարժումին հակառակ ուղղութեամբ տեղի կ'ունենայ: Սա մի գործութիւն է որ կը գործէ իւր մի սանձ իւր մակերեսին վրայ, և իւր շարժումն կը յամենէ դարձեալ երկու մանրեկոտ: Այս տեսակ թիւ մը աննշան կը թուի, սակայն այս յամեցուցիչ պատճառն եթէ կը գործէ 10.000.000 000 տարիներէ հետէ, թաւալման շարժումը կիսով չափ նուազեցուցած է և ժամանակաց անհունութեան մէջ պիտի շարունակի: Ովկիանոսներու զանգուածը միայն նուազեցնելով, Ծովային մեծամեծ հոսանքներն, օդային հոսանաց հանգոյն, համեմատաբար թաւալման շարժումին չեղակի լինելով, իւրեանց ուղղութիւնն անդալի իմն պիտի շփուի: Աստի յառաջ պիտի դայ, մի կողմանէ դրաւումն, միւս կողմանէ՝ ծովեղբայր չորացումն, այս ովկիանոսական գետաց ընթացիցը վրայ:

Երկրի շրջանը շուրջ գլոբեալապէս, պարբերական փոփոխմանց ենթակայ է յորս թերտան կ'երկարի կամ կը մօտենայ բոլորածէս: Աստի՝ Արեգական մերձեցման ու հեռացման ատեն, ջերմութեան բաշխման մէջ յառաջ կուգայ նշանակելի տարբերութիւն: Նոյնպէս, երկրային առանցքը յաջորդաբար ամէն կողմ հակելով, որպէս շնչանի մը առանցքը որ գետնին վրայ կը դառնայ, 21000 տարւոյ բոլորէ շարժումը կը գծէ, որ յամարար իւրաքանչիւր կիսագունդի եղանակները կը փոխէ: Կրնամք ըսել թէ աստի յառաջ կուգայ նոյն համար երկու ընդհանուր եղանակներ, մին սառուցման, իսկ միւսը ջերմացման, որոց իւրաքանչիւրը կը աւել 10500 տարի: Այս զանազան բազմաբաշխ պատճառներն յառաջ բերած են ու պիտի բերեն պարբերաբար սառուցեալ ժամանակներն:

Մի և նոյն ժամանակ այս խռովութիւնք սառուցման կայուն և յարաճուն պատճառներ պիտի յարուցանեն: Երբեք ջերմութիւնը այսօր միայն 30 աստիճանի չափ ջերմելով երկրի մակերևոյթը, իւր նուազումը նշանակելի հետեւութիւններ չպիտի ունենայ: Երկրի աստիճանաբար ցրտացումը Արեգական մակերեսին վրայ յառաջ գալիք փոփոխութիւններէն կ'ախտումն պիտի ունենայ: Աստղը, նոյն ինքն հարթորոք չէ: Լոյսն ու ջերմութիւնը յառաջ եկած են անդ՝ մրրիկներէ յուզեալ ու վեր լի վայր չըլեալ մթնոլորտի մը ազդու աշրուամներէն: Երբոր հեռադիտակով իւր մակերևոյթը քննեմք, անդ կը նշմարուին մթին բիծեր, ընդարձակ, պեղեալ իւր բացարձարծ կեղևին մէջ, երկրի 10 անգամը լայն: Այս բիծերն տակաւ տա տակաւ պիտի լայնան,

հրային խտը պիտի նրբանայ, ցուրտը յամարաբար պիտի գրաւէ մեր երկիրը, բեւեռներէն գէպ ի հասարակածն կեանքը պիտի անհետի իւր սառուցեալ մակերեսէն:

Այս գերագոյն ցրտացումն առաջ ծովն պիտի անհետի, ծծուի, նորանոր քարուտ խաւերու կազմակերպութեան համար: Այսպէսով երկիրը կրնար սպառել ծովերու պարունակածէն 50 անգամ աւելի ջուր: Մթնոլորտն ալ մի և նոյն բազմիւն պիտի արժանանայ: Մեր մոլորակը, լուսինն պէս, առանց օդի և առանց ջրոյ պիտի մնայ: Իւր փոքրիկ արբանեակին պէս պիտի շարունակէ կրել կծկումի ազդեցութիւնն, որ յառաջ պիտի բերէ փոթութիւններ, ճաթառուքներ, խորափառ ճեղքումներ:

Գիտեմք թէ կեղծոնխոյս զօրութիւնը երբեմն մեքենայից թռչարաններն ու սաստիկ դարձող հոլմաղացները կը խորտակէ: Մի և նոյն զօրութիւնը երկրի ճեղքաւորած մակերեսին վրայ ներգործելով, պիտի խլէ անտի հատուածներ և մեր հոլագունտը անջրպետին մէջ պիտի բլրուի: Իւր հատակոտորը պիտի կազմեն մին այն մեղմածոր աստեղաց (1) (étoile filante) պէսպիսութիւններէն՝ որ երկնից ինչ ինչ մասերը կը լեցնեն: Անոնք, որոց երբեմն անցնիլը կը տեսնեմք, հրեղէն անձրևի մը պէս մեր մթնոլորտի անօդացած մասէն, յառաջ եկած են, գէթ մասամբ, խորտակուած աստղերէ: Այս հրակէզ կորուսանքէն մի քանին երկրի վրայ կ'ընկնին: Նոյնպէս, մեր հոլագունտին փոշին պիտի ընկնի աւելի նորատի կամ իրենց բարեշրջութեան մէջ նուազ յառաջացած աստղերու վրայ:

Սակայն է՞ր աստեղց այս բարեշրջութիւնը: Փոխան կազմութեան անկման, կործանման այս շրջաններուն, ընդէ՞ր յաւիտենապէս իւրեանց դերը չ'են սրահեր նոքա: Առ ի՞նչ կը ծառայէ առ ինքին այս ձեւերն, դանի փոշոյ վերածելու համար որ անհուն անջրպետին մէջ ցան ու ցիր կը լինի: Գէթ մի բացարձակութիւն ներելի է մեզ: Իւր երևութից մէջ շարունակ փոփոխ բնութիւնը իւր օրինաց մէջ անստատն է: Ոչ ինչ կ'ստեղծի, ոչ ինչ կ'անհետի, ամէն ինչ կը կերպարանափոխի: Նիւթոյ իւրաքանչիւր հիւլէ ամենասլաղան վիճակներէ կ'անցնի: Անկենդան գոյացութիւնք, կաղեր ու հանքեր կը լինին տունի մը կամ կենդանի մը՝ որ կ'ապրի, կ'աճի, կ'արտադրէ ու կը մեռնի: Օդն ու հողը կը վերտանան իւրեանց գոյացութիւններն՝ անտի կազմելու համար ուրիշ կաններ: Ջուրը կը մաշեցնէ ժայռերն, կը լուծէ կամ կը քշէ զայն տղմաճե, մի և նոյն նիւթերով ուրիշ գործածութեանց յատուկ ժայռեր կազմելու համար: Ամենուրեք կը հաստատեմք տարբերաց այս թաւալումն, նիւթոյն այս բազմազան գործածութիւններն: ամենուրեք կեանքը մահէն կը ծնի, և այն աւերումն որ կ'սկսի՝ նոր ծնունդ մը կը պարստատէ: Այս օրէնքը կը վարէ զհամայն տիեզերս: պիտի վերագտնեմք զանի երկնային աշխարհաց մէջ, որպէս մին այն սահմանեալ երևութից՝ որոց թատրն է մեր հոլագունտը:

(1) Մեղրածո՝ աստղ օդաքարերու (bolide, aéro-lithe) ժողովրդային անուան է: Կը կարծուի որ ինչպէս կ'ըսէ յօդուածոյս հեղինակը, այս քարեր, խորտակուած աշխարհներու կորուսանքն են, որք երբեմն երկրի վրայ ևս կ'ընկնին: Իրենց ծանրութիւնն շատ փոփոխական է, այնպէս որ, կ'ըսեն թէ, Պրազիկոյ մէջ հայ հատ մը որ կը կշռէ 700 քիլոգրամ: և ուրիշ մը Լաբլաթայի եղերց վրայ՝ որ 50000 քիլոգրամ նուազ չը պիտի կշռէ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երբոր երկինք շատ պարզ է, յառաջ, փետրվար, մարտ ամսոց միջոցին արևմտա-տէն յետոյ և նոյեմբերի մէջ՝ արևածագէն առաջ կը տեսնուի գէլայի հորիզոնն հակած լուսեղէն երկզ մը որ վերջապէս կ'աւ-գուն լուսովն ընդարձակ բութ կոն մը կը ձևացնէ։ Որչափ որ գէլայի հասարակածն յա-ռաջանալով, այս փայլը՝ որ կը կոչուի Զօրիա-կոսի լոյս, կը կորուսանէ իւր կոնածէ երե-ւոյթն և կը կազմէ երկինք շուրջը լուսեղէն գօտի մը։

Այս անհուն լուսոյն տարրալուծութիւնը ցոյց տուած է թէ յառաջ կուգայ այն մե-նայած հիւլէներու գումարումն որք արե-գակնային լոյսը կը ցրուցեն։ Այս հոգումա-ղերու թիւն՝ երևակայութիւնը չէ կարող յղանալ։ Մեր մտորակային գրութեան տա-րածութեան մէջ փոքրած փոշոյ ամպ մը հագին նորա գաղ-փարը կարէ տալ։ Սորա ամբողջութիւնը կը կազմէ տեսակ մը միգուլա (nebuleux), կանոնաւոր շարժումով ոգեւորեալ որ զինքն տանելով տարին մի անգամ արե-ւին կը մօտեցնէ։ Նորանոր գիւտեր կը հա-ւատեն թէ այս հիւլէներու անկումն արե-գակնային մթնոլորտին մէջ, իւր մակերեւոյ-թին վրայ տեսնուած այրումներու մեծագոյն մասը կ'առնեն։ Սոքա փոշոյ վերածուած աշխարհներ են որ կ'այրին այս հսկայական վառարանին մէջ, 1,280,000 անգամ առաւել խոշոր քան զերկիրն։ Մեր մտորակին կեանք ու լոյս տալու համար պէտք եղած է որ ու-րիշ աստղեր ցանեն իւրեանց փոշին արեւին վերայ։ Մեր հողագունտը երբ իւր կարգին փոշի դառնայ, անուշիկ պիտի լինի ուրիշ որ և է հնոցի մէջ անհունութեան, ուրիշ մա-սանց մէջ կեանք փթթեցնելու համար։ Ահա ասոր համար է որ մեր գրութիւնը ամբողջ-վին կը տեղափոխուի, գեւե անձանթ չըջա-նի մը հետեւելով։

Անհամար շրջաններու միջև, նիւթը, իւր ձևափոխութիւններով անընդհատ նո-րոգուած, իւր խորհրդաւոր ձախտադրոյն զհետ կը պնդի։ Այս բաղադրութեանց մե-ծութիւնը մեր միտքը կը խոչտանգէ։ Կը զարմանալ նոյն իսկ որ կ'արողանալ ընդ-նըմարել զայն։ Այսքան հրաշալի ամբող-ջութեան մը պատճառներն ու վերջին վախ-ճանն որոնելու ոչ մի բանաւոր էակ պիտի յանգնի։ Յանդգնագոյնը շատ լաւ կ'ըզ-գան այն անհամեմատութիւնը որ գոյ ընդ-մէջ մեր իմացականութեան եւ անհուն ու յաւիտենական էակին ստորագրեալ։ Ըստ չափու որ յառաջանալով գիտական գիւտերու և ճշմարտութեանց մէջ, կ'զգամք ոչ եւս այն երկիւղած ստորափը զոր նախական մարդոյն կը ներշնչեն բնական զօրութիւնը, բայց մի խորին յուզում, յափշտակիչ, ներշնչիչ, որ մեզ կը յայտնէ զԱստուած իւր գործոյն մէջ։

(Թարգ.) ՄԱՆԻՇԱԿ

ԸՆԴԱՐՁԱԿ ՏԱՐԵՐՔ ՀԱՆՐԱՀԱՇԻՈՅ

Վանայ նահանգին նախորդ երկրաշարժի Պո-ղոս էֆ. Թաղերեանի սոյն գործ գրավածա-ռաց քով սպասած լինելով, այս անգամ վե-րըստին հրապարակ ելած է։ Ազգային վար-ժարանաց Մեծ. ուսուցչաց ուղարկութիւնը կը խնդրուի առ այս գործ, զի հոն ընդար-ձակօրէն պարզուած են հանրահաշուական գործողութիւնը, Ա. Բ. և Գ. աստիճանի հա-ւասարութեանց և առաջարկութեանց լուծ-ման վրայ քննադատութիւնը, մեծագոյնի և փոքրագոյնի, փոխադարձ հաւասարութեանց, յառաջատուութեանց, նշանակաց, բաղադ-րեալ շահու և տարեւորութեանց վրայ ընդար-ձակ ծանօթութիւնը։ Գին 15 դր։

Պատգամաբարձիւրիւնք. — Ճանիկ գաւա-ռին կառավարիչ անուանեցաւ Ճափիտ փա-շա, կառավարիչ Մէրէլի։ — Իչ Իւ (Ատանա) գաւառին կառավարիչ անուանեցաւ Մուհի-էտտին փաշա, կառավարիչ Ճանիկի։ — Սէ-րէզի կառավարիչ անուանեցաւ Մուսթաֆա Նէշէթ փաշա, կառավարիչ Իչ Իւի։ — Էն-կիւրիի Ավանոս գաւառակին գայմագամ ան-ուանեցաւ Բաիֆ Էֆէնտի, գայմագամ Մի-խալըճըի։ — Նոյն նահանգին Մխալըճը գաւառակին գայմագամ անուանեցաւ Մալիք պէյ։ — Վանայ կեալար գաւառակին գայ-մագամ անուանեցաւ Մուսթաֆա Էֆէնտի, գայմագամ կարճակնի, որոյ գայմագամ ա-նուանեցաւ Մէհմէտ պէյ։ նախկին գայմա-գամ Զէյթունի։ — Նոյն նահանգին Մամու-րէթ-իւլ-Համիտ գաւառակին գայմագամ ան-ուանեցաւ Պէհմէտտին Էֆ, նախկին պաշ-տօնեայ գաղթականաց զեւեղման Գոնեսայի։ — Արշնի Մատն գաւառին Զերմիկ գաւա-ռակին մարգահամարի պաշտօնեայ անուանե-ցաւ Մուսթաֆա Էֆ, նախկին երեւմտական պաշտօնեայ նոյն գաւառակին։ — Իւսկիւ-տարի կառավարիչ անուանեցաւ Վճառեկ ա-տենին աղբրատարոց ճիւղին անգամ Սապրի Էֆէնտի, որուն այս առթիւ իւրայի առաջին ատոյժան տրուեցաւ։ — Տիգրանակերտի ձէ-զիւրէ գաւառակին գայմագամ անուանեցաւ Խալիլ Բասիլ Էֆէնտի։

— Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ Դ. կարգի Մէհմէտիէ պատուանշան շնոր-հել Պրուսայի Գեր. Առաջնորդին ֆոխա-նորդ Սրժ. Արիտակէս վարդապետի Վանքեան։

— Կայս. Իրատէի մը համաձայն, Հայ-տէրանը և այլ Աշխրթներէ Համիտիէ հե-ծեալ զնդին պատկանող 52 սոյսք ճամբայ ելած են մայրաքաղաքս գալու համար։

— Ի Հաղպաղ հաստատելի երկրագոր-ծական Համիտիէ վարժարանին մէջ հաւա-քածոյ մը պիտի կազմուի Թուրքիոյ մէջ կողմը յառաջ եկած ընդհնդէներէ, որպէս զի ուսա-նողք կարենան կատարեալ տեղեկութիւն ու-նենալ Թուրքիոյ մէջ կողմը յառաջ եկած ընդհնդէնաց վրայ։

— Կայս. կառավարութիւնը մտադիր լի-նելով Տուրանէն Շքոտրայի ճամբով ի Բրէզ-րին և անտի ի Գարգուի երկաթուղի մը շի-նել, բանակցութեանց պիտի մտնէ՝ եթէ յանձնառուք ներկայանան ստանձնելու այս շինութիւնն, որոշեալ հիմնական պայմանաց համաձայն։

— Սէլանիկ—Մանասթըր երկաթուղոյ գծին շինութեան գովիւնը կարգուած է Մար-կոսեան Գալուստ Էֆէնտի, նախկին գովիւնը Գասապայի գծին, և իրեն օգնական նշանա-կուած է Երուսաղեմայ երկրաշարժի Իրֆան Է-ֆէնտին։

— Մայրաքաղաքիս սարսկական նախորդ գեսպան Միրզա Մոհսին խանի Պոլսոյ գես-պանատան և Սթէնեայի ամարանոցին մէջ ու-նեցած կարասիները ի վաճառ պիտի հանուին։ Այս կարասեաց մէջ կան արձաններ, նկար-ներ և թանկագին անօթներ, որոց համագու-մարը 7—8000 ոսկի կը հաշուի։

— Պարսկաստանէն Բէնդլի գնելու և ի Թուրքիա վաճառելու համար Բարիզի մէջ ա-նանուն ընկերութիւն մը կազմուած է, որ-րուն ընդարձակ սահմանի մը մէջ կը մաս-նակցի Օսմ. կայս. Պանքան։

— Օսմ. կայս. Պանքան ձեռնարկած է նոր գործակալութիւններ հաստատելու յու-շաք և ի Պալքէսի։

— Բ. Դուռը բոլոր գաւառաց հրաման ուղղած է ամէն ջանք ի գործ դնել՝ փութով գանձելու համար ոչխարի տուրքը։

— Չորեքշաբթի օր մայրաքաղաքս ժամա-նեցին 25 գերմանացի կրօնաւորք։

— Թուրքիոյ մէջ ևս ի գործ պիտի դը-րուի թղթատարական փոխանակագրի (մալ-սա-փոսթ) գրութիւնը։ Պատրաստուած ծը-րագրոյն համաձայն, թղթատարական և հե-ռագրական վարչութիւնք մինչև 20 ոսկինոց փոխանակագրեր պիտի տան։

— Մոլթէ մարաշախտին մէկ ձեռագիրը գտնուած է՝ Թուրք զօրաց քաջութեան և Սուլթան Մահմուտ կայսեր անթիւ բարիքնե-րուն վրայ խօսող։ Յայտնի է թէ Մոլթէ օս-մանեան բանակին մէջ ծառայած է Ն. Վեհա-փառութեան օրով։ Վիլհէլմ կայսրը հրամա-յեր է ձոյն կերպով կազմել այդ ձեռագիր և Վեհ Սուլթանին մատուցանել։

— Մայրաքաղաքիս օտար գեսպանաց ե-րեցագոյնը Միրզա Մոհսին խան պաշտօնէն հրաժարած լինելով, այժմ՝ երեցագոյնը կը ներկայանայ աւստրիական գեսպան Պառնոյ տը Բալիէ, որոյ նախագահութեան ներքե տեղի պիտի ունենան յետ այսորիկ գեսպա-նական գումարմունք։

— խարբերգի Ագճէպաղ գաւառակին Հէ-քիմ խան գիւղախմբին կողմերը ժամանակէ մը ի վեր ասպատակող Գոնանլար մականուան-եալ Ալէվ, Մուսթաֆա և Պէքիւր անուն ա-ւազակք, զինուորաց կողմէ եղած հալածա-նաց չը կրնալով դիմանալ, ստիպուել են անձնատուր լինիլ։

— Պարսկական գեսպանատան առաջին քարտուղար Արթաքի խան Նէվրուշ շարաթ-օր Օտէսա ուղեորեցաւ։

— Իտալական կառավարութիւնը մտադիր է եղեր ջնջել տարեկան 8000 ֆրանքի նը-պաստը զոր կուտայ Հայ-Հոռմէականաց Պատ-րիարքարանի, Կիլիկիոյ 16 վարժարանաց մէջ իտալական լեզուի ուսուցման համար։

— Եգիպտոսի Բարձր. Խտիվը պատուա-նշան մը շնորհած է Վսեմ. Պօղոս փաշայի, որ-դի Եգիպտոսի նախկին նախարարապետ Բար-ձր. Նուպար փաշայի։

— Գիւրտերէ կազմելի Համիտիէ հեծե-լագնդին պատկանող Հայտէրանը Աշխրթէն երեք աղաներ՝ Խրենց 33 հետևորդներով, Շիքաքը Աշխրթէն եօթն աղաներ՝ իրենց 14 հետևորդներով, Զիլիկի Աշխրթէն մէկ աղա՝ 5 հետևորդներով, ձէպրանը Աշխրթ-թէն մէկ աղա՝ 2 հետևորդներով, և Ատ-մանը Աշխրթէն մէկ աղա և մէկ հետևորդ, ընդամենը 68 հոգի, չորեքշաբթի օր մայրա-քաղաքս ժամանեցին։

— Նիկոմիդիայէն կը գրեն թէ Անատո-լի երկաթուղեաց շինութիւնը ծանր դժ-ուարութեանց հանդիպած է Բէօրիւ կոչ-ողած տեղէն անդին. կը կարծուի որ այս գծուարութեանց յաղթելու համար հարկ պիտի լինի վերջապէս փոխել կանխաւ որոշ-ուած ճանապարհը։

— Օսմանեան հպատակ Միշէլ էմ. ձիե-րու համար նորաձե պայտ մը հնարած է, ո-րով այդ անասունք ազատ պիտի մնան յա-ճախ փխտուելու վտանգէն։ Այս նոր պայ-տի կիրառութիւնն արտօնուել է։

— Խարբերգի կուսակալ Նուսուհի պէյ քննական պտոյտի մ'եղած լինելով, Մալա-թիա ժամանել է։

— Նիսէքը խիւսա չողենաւ ձիտոյն ու-ղեւորեցաւ 350 ուխտաւորք։

— Շարժումս անանկ հրատարակուած են հետեւեալք. ի Պոլիս, Պահլէ Բարու, զինուորական պահականոցին ետեւի կողմը թիւ 1 խանութին մէջ հաստատեալ արմուեաց վաճառական Թէոդորոս Բաղլիաս. — Մահմուտ փաշա, Բիւրքէի խանին դիմաց 151 թիւ խանութին մէջ հաստատեալ մուշտակավաճառ Անաստաս Թաքիէճի և իւր ընկերն ի խաքէջ Բիւրի Բաշա բնակեալ Մարքո Սափրիէթոն. — ի Ղալաթիա Մահմուտիէ փողոց, թիւ 38 մթերանոցը հաստատեալ վաճառական իսաչիկ Շամսանճեան, որ բանտարկուած է. — ի Պոլիս, Մեծ Շուկայ, Բէսէճիէթը ճատտէսի, Գալաթիանէ փողոց, թիւ 31 խանութը հաստատեալ վաճառական Պողոս Փէշտիմալճեան, որ անձնական երաշխաւորութեան ներքեւ առնուած է. —

— Դատական բարենորոգմանց յանձնաժողովը քննութեան ենթարկած է բանտերու ընդհանուր վիճակին նկատմամբ ներկայացեալ գրութիւնները. —

— Փարիզի դրամատիկներէն Պ. Հալթին կ'աշխատի ստանալ Տէտէ-Ալաճէն ի Սելաշիկ երկաթուղոյ մը շինութեան արտօնութիւնը. —

— Զօհրապ Միհրան էֆ. խիստ թեթեւ ֆէս մը հնարած լինելով, 15 տարւոյ համար հնարիչի արտօնութիւն ստացած է. —

— Ռուսոյ կայսեր երկրորդ որդի Կիորիկ Մեծ-Դուքսը հինգշաբթի առաւօտ մայրաքաղաքս ժամանց. —

— Որոշմամբ Բաղաքապետ Վսեմ. Բըտւան փաշայի, մայրաքաղաքիս չըջակայքը՝ ընդարձակ ծառաշատ տեղ մը անասնոց ընդհանուր վաճառատուն մը պիտի հաստատուի, ուր պիտի տարուին ուղղակի՝ գաւառներէն ու օտար երկիրներէ բերուած անասունք և հոն դիմողք գիւրութեամբ ու նպաստաւոր պայմանաց մէջ պիտի կրնան գնել, ինչպէս նաեւ վաճառել ձի, կով, և այլն. վաճառատան չորս կողմը պիտի գտնուին ախոռներ, մէջ տեղն աւաղան մը, ուրիշ տեղ մ'ալ պիտի յատկացուի հիւանդ անասնոց համար. Անասունները քննելու համար՝ կառավարութեան կողմանէ անասնաբոյժեր ևս պիտի գլուռուին. —

— Թագվիմի Վէգայիի մէջ կը կարդամք թէ տարեկան 20 հազար զրուշի գումար մ'աւելցած է Ոստիկանութեան նախարարութեան երմոացուցին վրայ, արձակեալ սեւամորթ գերիներու համար իրիւ հիւրանոց առժամանակեայ տուն մը վարձելու համար. սոքա այս տան մէջ պիտի մնան, մինչև որ հասկցուի իրենց թիւն ու կայս. Իրատէով հաստատելի հիւրանոցին տարածութիւնն որոշուի. —

— Նոյն լրագրոյ մէջ կը կարդամք թէ, ձէլալի և Զէյլանը Աշիթթներու ցեղապետ էյուպ փաշայի ամսաթուղակն 2000 զրուշի բարձրացաւ. —

— Ի Բերա Ֆրանսական Էլիւպ մը հաստատելու խորհուրդ կայ, և սու այս հանգանակութիւն բացուած է մայրաքաղաքիս ֆրանսական գաղթականութեան մէջ. —

— Սկնայի վարժարանին տնօրէն Էսլուզլիա Թէվիթի պէյ կը մտադրէ այն թանգարանին տեղ, ուր Եէնիչէրիք ի ցոյց դրուած են, «Գըյաֆէթլիանէի Օսմանի» անուամբ նոր շէնք մը կառուցանել՝ նոյն թուականի ճարտարապետութեան ճաշակաւ, կահաւորել զայն և հոն ամիսօրէն այն ժամանակի զինւորներն իրենց հագուստներով ու զէնքերով. Այս բարեփոխութեամբ կը յուսացուի որ առաւելու այն 4-5000 զրուշի ամսական հա-

սոյթը, զոր Եէնիչէրիներու թանգարանը իւր արդի վիճակին մէջ կը բերէ. —

— Անդրիանուպոլէն մայրաքաղաքս բերուեցան 33 աւազակներ, որոնք հեռաւոր վայրեր պիտի աքսորուին. —

— Կայս. հրամանաւ, զինուորական նոր պահականոցի մը շինութեան ձեռնարկուած է ի Մէզար Պուռնու. —

— Արտաքին գործոց նախարարութեան խորհրդականի օգնական Վսեմ. Իլիաս պէյի եղբայրը Յակոբ էֆ. Չայեան երեքշաբթի օր վախճանէր է Սօֆիա. —

— Բերայի յարմար մէկ տեղէն մինչև Պէօյիւք-Տէրէ Էրկաթուղի մը շինելու համար արտօնութիւն խնդրուած է. —

— Բաղաքապետութիւնը նկատելով որ նպարավաճառներու, մանրավաճառներու և մանրած սուրճ ծախողներու խանութներու մէջ նուիրական պարբերութիւններ պարունակող գրքերու թուղթերու մէջ կը փաթթուին ծախուած առարկայները, և այդ թուղթեր յաճախ գետին ընկնելով՝ ոտքի տակ կ'երթան, արգիլած է խանութներու մէջ այդ կարգի թուղթերու գործածութիւնը. —

— Պ. Կոստանդին Կամարական Դամասկոսի ռուսական հիւպատոսի փոխանորդ, և հարկւրապետ Պ. Ժօրժ Ճէնուեսա Թըրինճ Պասրայի անգլիական հիւպատոս անուանած են. —

ՔՐԻՍՏՈՍՏՈՒՐ ԷՖ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

— Յաւելով խնացանք թէ, Բրիտոստոս էֆ. Ղազարոսեան որ կրօնագիտութեան ուսուցիչն է Դուսիւփիոսի Պէդէսան և Լուսաւորչեան Մայր վարժարանաց, երեքշաբթի օր աշակերտաց հարցաքննութեան պահուն՝ յանկարծ սաստկանալով արդէն քանի մը օրէ ի վեր իւր վրայ տիրած տկարութիւնը, կաւքով կը փոխադրուի ի տուն, ուր կը դարմանուի այժմ. Հինգշաբթի երեկոյ տեսանք զինքը յուսալից վիճակի մէջ, կը մաղթեմք որ շուտով առողջանայ բազմաշատ և արդիւնալից ծերունին, և տակաւին երկար տարիներ ապրի ու գործէ մեր մէջ. 40—50 տարիներէ ի վեր իւր անընդհատ և լռութիւն գործունէութիւն, ո'չ միայն պաշտօնական շրջանակաց, այլ և կրթական ասպարիզին մէջ, խիստ արդիւնաւոր եղած է և աղգովին երախտագիտութեան արժանի. Դեռ այս երեքշաբթի առուր հարցաքննութեան միջոցին իսկ, կրօնագիտութեան ուսման մէջ իւր աշակերտաց տուած քաջ քաջ պատասխաններն մեծապէս դուրս եկան հանդիսականներն, և մինչև իսկ բարձրաստիճան եկեղեցական մը յայտարարէր է թէ՝ ուրիշ վարժարանի մէջ չէ տեսած կրօնական գիտելեաց մէջ այսքան զարգացեալ աշակերտներ. —

ՏՕՒԹ. ՍՏԵՓԱՆ ԹԷՐԶԵԱՆ

Ամէն օր մինչև կէս օր հիւանդ կ'ընդունի Կէտիք փաշա առաջին փողոց թիւ 18 տան մէջ եւ կը դարմանէ ամէն տեսակ հիւանդութիւններ. Ժամը 8էն վերջը (Ը. Թ.) կը գլուռուի Պահլէ-Գարու Ալիքեան դեղարանը. Ուրբաթ օրեր թէ՛ տան եւ թէ՛ Դեղարանին մէջ ձրիապէս կը դարմանէ. —

ՍԻՄՈՆ ԳԱԲՍՄԱՃԵԱՆ

ՆՈՐ

ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Յարում կը բովանդակին 30,000 բառք, ոգք, նորաբանութիւնք, գաւառական բառք գիտականք, արհեստականք, դիցաբանականք, եւն, եւն. —

Սոյն նոր ԲԱՌԱԳԻՐՔՆ, որ սկսած է հրատարակուիլ նորածոյ տաւերով եւ ընտիր տպագրութեամբ, սահմանուած է իւր ճիշտ պարունակութեամբն օգտակար հանդիսանալ բազմաց եւ լրացնել դասական գործոյ մի գլխաւոր պէտքն, պարունակելով նախնեաց լեզուի ամենէն գործածական բառերն ու ոգեր՝ ի հարկին իրենց նոր առումներովն ու համանշանակներով. —

Նոր բառագիրքն՝ օգտուելով բաց ի հայ բառագրքերէ, գլխաւորաբար նորայր Բիւզանդացւոյ Դադ. է ի Հայ ընդարձակ բառարանէն, նոյնպէս եւ այլ հոյակապ նոր հրատարակութիւններէ՝ յաջողած է պարունակել ցարդ հայ բառագրքերէ դուրս գտնուած մի քանի հազար բառեր, ինչպէս նաեւ քերականական կանոնաց կարեւոր ամփոփումի. —

Նոր բառագրքիս առաւելութիւններէն մին է հարտար եղանակաւ մը նշանակել շատ մը բառերու արմատներն եւ նոցա ածանց ու բարդ բառերն. —

Ամբողջ գործն պիտի բաղկանայ 40 թերթերէ. Բաժանորդագրութեամբ սկսուած է հրատարակուիլ. բաժնեգինն է իւրաքանչիւր օրինակի համար 15 դրամեկան. Գաւառներէն դրոշմանոցով ալ կ'ընդունուի. —

Իմեւ առ հեղինակն, Կ. Պոլիս Էսկի Ջապ-Թիէ հատտէսի, Պէրպէրեան Նշան Էֆէնտիի տպագրատունն. —

Առաջին թերթը ձրի կը տրուի. —

«ԾԱՂԻԿ» ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆՔ

Բաբերդ. Ա. Մ. 73 դրը ստացանք. ո'րոց բաժնեգինները կը կազմէ այս գումար, հաճեցէք գրել. նոր բաժանորդաց թերթերն ևս սկսանք զրկել, բոլոր ձեր հասցէին. —

Մաղնիս. Աղ. վարժարան. 27րդ թիւէն սկսեալ վարժարանիդ զրկել սկսուած «Ծաղիկ»ը նուիրուած է կրթասէր ազգայինէ մը. —

Երզնկա. Մ. Կ. 2եր վեցամսեայն (30—35 թուոց) ըստացանք. —

Մալկարա. Ա. Յ. Հաճեցէք ամբողջ ձեռագիրը զրկել հանգերձ բնագրով. — Ձե վճարած. —

Մարաշ. Ն. 2. 2եր ուղած գրքերը զրկուեցան. Կեսարիոյ Նիքի գիւղի վարժարան. 34րդ թիւէն սկսեալ վարժարանիդ զրկել սկսուած «Ծաղիկ»ը նուիրուած է Ս. Կարապետի վանուց Ժառանգաւորաց վարժարանի աշակերտներէն. —

ԱՐԺԷՔ ԴՐԱՄՈՑ			
Օսմ. լիւան 100 դր. էն			
Մէճիտիյէ	108	Վ. Է. Գ.	103 10
Քաւորդ. մէճիտ	107 (10 բաւան) քոյ		90 6
Մանր. մէճիտ	103 20	Նորաբան	87 22
Մէթալիք	101	Գրիկ	51 45
Պէշիկ	103	Վ. Է. Գ.	110 20
Մանր. թղթագրութ. 7 10			
Գոնսուլիտէ (Երեկոյ.)	20	Վ. Է. Գ.	72
Թահվիլ. Օսմ. 4 01 ⁰ 20	Թահվիլ		48 20

ԱՐՏՈՆԱՏԻՔ և ՍԱԲԱՆԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Էսկի-Ջապրիէ փողոց, թիւ 61